

# հորիզոն

2020 | ՀԵՄԱՅԵՐԳԻ | DECEMBER | DECEMBRE  
PUBLICATION HORIZON-CONTRACT NO 40055294

horizon







# ADONIS

**Sauvé - Des sources (DDO) - Laval (Curé labelle) - Laval EST  
Anjou - Place Vertu - Centre Ville - Grifintown - Brossard  
Gatineau - Ottawa - Mississauga - Scarborough - Dundas**





**Al-Nejmah**  
FINE FOODS INC.



Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն | Ճաշարան | Փուր | Մսավաճառ

3085 Hurontario St. | Unit 1-6 | Mississauga | ON L5A 4E4

Phone: +1(289) 232 1200  
[WWW.ALNEJMAHFOODS.COM](http://WWW.ALNEJMAHFOODS.COM)



# GRAND OPENING JANUARY 2021



We would like to thank the Armenian community for trusting the Groupe Gabriel and we encourage you to join our team.

Please send your CVs to [kevork@gabriel.ca](mailto:kevork@gabriel.ca)

## JLR WEST ISLAND

### GRUPE GABRIEL - VEHICLE DEALERSHIPS IN THE GREATER MONTREAL.

PORSCHE PRESTIGE

AUDI ST-LAURENT

AUDI WEST-ISLAND

AUDI ANJOU

AUDI TROIS- RIVIÈRES

LEXUS GABRIEL ST-LAURENT

LEXUS GABRIEL BROSSARD

INFINITI GABRIEL ST-LEONARD

JLR WEST ISLAND

ACURA GABRIEL WEST-ISLAND

GENESIS DE L'OUEST

HONDA GABRIEL

TOYOTA GABRIEL ST-LAURENT

TOYOTA GABRIEL CENTRE-VILLE

NISSAN GABRIEL PLATEAU

NISSAN GABRIEL ST-LÉONARD

NISSAN GABRIEL P.A.T.

NISSAN GABRIEL ST-JACQUES

NISSAN GABRIEL ANJOU

NISSAN GABRIEL JEAN-TALON

MAZDA GABRIEL ANJOU

MAZDA GABRIEL ST-LAURENT

MAZDA GABRIEL ST-JACQUES

HYUNDAI GABRIEL ANJOU

HYUNDAI GABRIEL ST-JACQUES

HYUNDAI GABRIEL OUEST

VOLKSWAGEN GABRIEL ST-CONSTANT

VOLKSWAGEN GABRIEL ST-LAURENT

FORD GABRIEL ST-JACQUES

LINCOLN GABRIEL ST-JACQUES

KIA GABRIEL NORD

KIA GABRIEL OUEST

-

BMW MOTO GABRIEL

HARLEY-DAVIDSON GABRIEL



«Հորիզոն» բացառիկի այս թիւը կը ձօնենք՝  
Արցախեան պատերազմի նահապտակ զինուորներուն եւ կամաւորներուն

(Կողքի նկարը Սիփան Կիւլիմեանի)

*Այս էջը կը հովանաւորէ Melbourne-ի «Գոյամարտ»-ի Ձայնը*

# Վերադարձ դէպի ապագայ պարտութեան բանականացումը եւ հայութեան լինելութիւնը

... « Capitulé  
De cette vie est-tu las

...  
Et s'il était à refaire... »

Louis Aragon, *Ballade de celui qui chanta dans les supplices*

Ֆրանսական Sciences Humaines ամսագրերի «Պատմութեան Մեծ Թղթածրարները» բացառիկ համարներու շարքի առաջինը, Նոյեմբեր-Դեկտեմբեր 2012ին լոյս տեսած, նուիրուած է պատերազմի երեւոյթի պատմական հոլովոյթի բազմերես ուսումնասիրութեան: Առաջնորդող յօդուածը կ'անդրադառնայ հասարակութեանց վրայ պատերազմի ազդեցութեան: «Ոչ մէկ մերօրեայ ընկերաբան ցարդ ուսիլը առած է մարդկային հասարակութիւնները ուսումնասիրելու որպէս կիզակէտ ունենալով պատերազմը: Այդուհանդերձ, եթէ պատերազմը կրնայ սահմանուիլ որպէս կազմակերպուած զինեալ վայրագութիւն որ իրարու կը հակադրէ երկու համայնքներ, ապա եւ այն իր անդրադարձը ունի մարդկային արարքի ամէն մարզերուն վրայ՝ քաղաքականէն մինչեւ իրաւականը, տնտեսականը, մշակութայինը եւ արուեստ: Այս իմաստով պատերազմը համահունչ է Մ. Մաուսի (M. Mauss) «հասարակական ամբողջական եղելութիւն» («fait social total»): Յաճախ ընկալուած որպէս գուռ ուղղակի երեւոյթ յատկանշուած իր դժուար բացայայտուող ծածկագրերով, պատերազմը նաեւ շատ աւելի լայն հասկացողութեամբ է նաեւ հասարակական եւ մարդաբանական եղելութիւն մը, որ խնդրոյ առարկայ կը դարձնէ հասարակական կապի եւ, ընդհանրապէս, մարդկային արկածախնդրութեան մասին մեր ունեցած գաղափարը:» (“Ce que la guerre fait aux sociétés”, Les Grands Dossiers des Sciences Humaines Histoire “La guerre des origines à nos jours” Hors’série no. 1, Novembre-December 2012, էջ 7)

Սեպտեմբեր 27-ին Արցախի բոլոր ճակատներու ուղղութեամբ սկսած ազրպէյճանաթրքական լայնամասշտապ յարձակողականով սկսած պատերազմը, որ աւարտեցաւ Նոյեմբեր 9-ին վարչապետ Նիկոլ Փաշինեանի ստորագրած Հայաստան-Ազրպէյճան-Ռուսաստան եռակողմանի յայտարարութեամբ, Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի հայութեան համար բեկումնային «հասարակական ամբողջական եղելութիւն» մը պիտի նկատել: Հայ կեանքը, հաւաքական ինքնութեան հասկացողութեան մինչեւ լինելութեան իմաստաւորման արարողութիւնները, մէկ բան էր պատերազմէն առաջ, ուրիշ բան մը պիտի ըլլայ հիմա: Աւելի'ն, այդ «հիմա»ն ինքնին անորոշ մըն է որ ժամանակագրական կարգով հաւաքական/ազգային գոյութեան մասին մտածումը կը սառեցնէ յետ-պատերազմեան անմիջականին՝ trauma-ին վրայ:

Դժուար է այս վերջին յղացքին ճիշդ հայերէնը գտնել: Կուլիեան առցանց թարգմանութիւնը ցոյց կու տայ «տրավմա»: Բժշկական բառամթերքով ան համահասարակ է «վէրք»ի եթէ նկատի ունենանք սպաներէն traumatologիա բառին բառարանային (Դոկտ. Յարութիւն Մ. Վ. Թէքեան, Առձեռն բառարան սպաներէնէ հայերէն, Imp. La photo-

presse, Պէյրութ, 1955) թարգմանութիւնը՝ վիրաբանութիւն, «վնասուածք»ի եթէ դիմենք traumatology-ի Կուլիի առցանց թարգմանութեան («վնասուածքաբանութիւն»): Զանցելով այս վերջինը, «վէրք»ը կ'իմաստաւորուի գլխադրով եթէ մտաբերենք Խաչատուր Աբովեանի գործը՝ Վէրք Հայաստանի: Այդուհանդերձ, Աբովեան այդ վէպը, առաջինը՝ աշխարհաբարով ինչպէս ծանօթ է, գրեց Զարթօնքի դարուն՝ հայութեան պատմութեան բեմ վերադարձի գործընթացի ժամանակ: Վէրք Հայաստանին այդ գործընթացի դերակատարներէն մէկուն հիմնական ներդրումն էր, եւ եթէ նոյնիսկ վէպը իր ենթախորագրով կը ներկայացուի որպէս հայրենասէրի մը «ողբ»ը անոր լոյս ընծայումն ու տարածումը ինքնին զարթօնքի կոչ էր, ապաքինման յոյս էր:

Այսօր երբ կը խօսինք հայութեան անմիջական «հիմա»՝ յի «վէրք»ին մասին, անոր սահմանումը պիտի փնտռենք արդի հոգեբանութեան տեսութիւններուն մէջ, եւ, բաղադատական կարգով, տարբեր հաւաքականութիւններու, ներառեալ հայութեան անցեալը, փաստագրուած եւ վերլուծուած փորձառութեանց մէջ: Գիտակցելով հանդերձ, որ Թղթածրարի դասական բանաձեւումով Աննա Քարենինա վէպի առաջին տողերով՝ Իւրաքանչիւր ընտանիք/հաւաքականութիւն դժբախտութիւնը, այս պարագային՝ Վէրքը, կ'ապրի իրեն իւրայատուկ ձեւով: Եւ այդ մէկը հայութիւնը լաւ գիտէր Յեղասպանութեան, Աղէտին, փորձառութեամբ...

Աննա Կոթլիպ ի՞նչ է trauma-ն հարցումին պատասխանելու փորձով կ'ըսէ թէ այն «աւելի քան լոկ վախ կամ յանցանք կամ անբաղձալի յուշեր ամբողջականացնող ուժ մըն է որ կը կազմալուծէ մեր աշխարհները առաջնորդելով ինչ-որ ձեւի աշխարհակորուստի: Հատու գիծ մը կը քաշէ «առաջ»ն ու «յետոյ»ն ճշդելով. «առաջ»ը նախափլուզուած աշխարհն է, անձը որ կը ճանչնայինք, «յետոյ»ն կոտորուած աշխարհեանքի մը յամեցող աւերածութիւնն է:» (Anna Gotlib, «Trauma unmakes the world of the self. Can stories repair it? aeon, առցանց հրատարակութիւն, 23.11.2020, ներբերուած [https://psyche.co/ideas/trauma-unmakes-the-world-of-the-self-can-stories-repair-it?utm\\_medium=feed&utm\\_source=rss-feed](https://psyche.co/ideas/trauma-unmakes-the-world-of-the-self-can-stories-repair-it?utm_medium=feed&utm_source=rss-feed) կայքէջ 28.11.2020-ին) Այս մօտեցումով trauma-ն կը տեղադրուի հիմնականօրէն անձի, ենթակայի, «ես»ի սահմանին մէջ ուր եւ աշխարհափրկութեան կամ վերաշխարհաշինութեան ճիգը կ'իմաստաւորուի 'յետոյ'ի մնացած ժամանակին համար:

Բայց trauma-ն նաեւ հաւաքական երեւոյթ մըն է եւ վերջերս արժանացած լայն ուսումնասիրութեանց հասարակական գիտութեանց տարբեր ճիւղերու մէջ -ինչպէս օրինակ՝ Erica Resende and Doville Budryte (eds.), Memory and Trauma in International Relations. Theories, cases and de-

*Այս էջը կը հովանաւորեն Չեռն եւ Երոյր Միւլիեան*





**BARRY**

**KAREN**

**ALEX**

**GARO**

# **KAZANDJIAN**



**METTRE NOS CLIENTS EN PREMIER  
NOUS CLASSE AUSSI PARMIS LES PREMIERS**

**EXPERTISE**

**EXPÉRIENCE**

**EXCELLENCE**

## **RÉ/SULTATS**

# **514 333-3000**

**AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | FRANCHISÉ INDÉPENDANT ET AUTONOME DE RE/MAX QUÉBEC**

bates, New York: Routledge, 2014, որու գլխուխներէն մէկը յատկացուած է Սեւրի դաշնագրին ունեցած անդրադարձին թրքական յիշողութեան եւ ինքնութեան կերտումի քաղաքականութեան վրայ, եւ Jared Diamond, Upheaval. Turning Points for Nations in Crisis, New York: Little Brown and Company, 2019: Trauma-ն, ուրեմն, պիտի հասկցուի ե՛լ որպէս իւրաքանչիւր անհատի ապրում, ե՛լ հաւաքական տուամ:

Հայութեան «հիմա»-ի trauma-ն շատ յստակօրէն պիտի հասկնանք, տարբերենք, իր զանազան մակարդակներով: Առաջինը, եւ ամենէն հիմնականը, ամենէն ողբերգականը, գերիններուն, պատերազմին անհետ կորածներուն հարցն է, այն ընտանիքներուն որոնք դեռ կը սպասեն որեւէ լուր իրենց հարազատներուն ճակատագրի մասին: Երկրորդը, ի մասնաւորի արցախցիներուն համար, բնակավայրի կորուստն է, եւ խօսքը ոչ թէ ընդհանրապէս Արցախի 70 տոկոսի կորուստին մասին է, այլ հոնտեղի բնկաիչներուն որոնք իրենց տունները վերադառնալու հեռանկար չունին: Երրորդը՝ պատերազմին նահատակուած ամբողջ սերունդի մը սուգն է եւ անոր խոր անդրադարձը ընտանիքներու առօրեային վրայ: Կայ, վերջապէս, յաջորդ ամիսներուն համավարակի պարագաներու սպասելի յաւելման պատճառով հանրային առողջապահական եւ տնտեսական զոյգ ճգնաժամերը եւ անոնց ընկերային աղիտալի հետեւանքները, ընդ որում ե՛լ աղքատացման, ե՛լ հարստութեան յաւելեալ կեդրոնացման, ե՛լ արտագաղթի նախատեսելի աճ: Այս բոլոր հաւաքական երեւոյթները անխուսափելիօրէն պատերազմի trauma-ն այնքան պիտի ենթակայացնեն որ կրնայ նոյնիսկ վտանգուել հաւաքականութեան մը մաս կազմելու էթոսը, որով եւ ամէն մարդ իր գլխու ճարին նայելու բնագոյր պիտի հաստատագրուի անոնց մօտ:

Իշխանութիւններու պատասխանը այս իւրաքանչիւր մարտահրաւէրին իր կարեւորութիւնը պիտի ունենայ trauma-ի գերազանցման անհատական ճիգերուն վրայ: Բայց ո՛վ որ ալ ըլլայ իշխանութեան վրայ շատ յստակօրէն պիտի գիտակցի որ պիտի ունենայ շատ սահմանափակ ֆինանսական միջոցներ, պիտի գտնուի Մոսկուայէն բացարձակ կախուածութեան պայմաններուն մէջ, առանց ոչ իսկ այլեւս խիստ խորհրդանշական պետական գերիշխանութեան տրամաբանութեան մէջ ինքնուրոյն նուազագոյն քայլը փորձելու ինչպէս, պիտի ընդունի, որոշակի յաջողութիւններով փորձած էին «նախկիններ»ը: Այս պայմաններուն մէջ, պետութեան ղեկավարութիւնը իր ձեռքերուն մէջ ունեցող քաղաքական այն ուժը որ իշխանութեան գլխուն պիտի ըլլայ պիտի գիտակցի որ իր առաջնային, եթէ ոչ միակ, գործօնը որեւէ քայլ տալու համահայկական ոլորտին մէջ իրեն հանդէպ վստահութիւնն է: Հրաշք-լուծում մը չէ այդ, բայց առանց անոր ներքին կայունութիւնը պիտի խաթարուի եւ միջազգային բեմահարթակին վրայ Հայաստանի հանրապետութեան մեկուսացումն ու անոր հանդէպ շահագրգռութեան բացակայութիւնը առաւելի պիտի նուազեցնեն ինքնուրոյն որեւէ որոշումի կառելիութիւն:

Պարզ՝ յետ-պատերազմեան իշխանութիւններու հիմնական մարտահրաւէրը պիտի ըլլայ համահայկական ներուժի համախմբումը եւ վստահութեան կառուցումը: Ահաւասիկ հոս է որ պատերազմի պարտութիւնը որպէս trauma «հիմա»-ի անմիջականութեանէն անդին կ'անցնի խնդրոյ առարկայ դարձնելով Հայաստանի եւ հայութեան լինելութիւնը ոչ միայն որպէս լոկ վերապրում այլ որպէս ապագայի ձգտելու

կարողութիւն ունեցող հայրենիք եւ ազգային հաւաքակառուցութիւն, «յոյսի հայրենիք, լոյսի հայրենիք», ինչպէս կ'աւարտի Թումանեանի հանրածանօթ Հայրենիքիս հետ բանաստեղծութիւնը:

Պատերազմի պարտութեան trauma-ն կը հասկցուի յանձնողական յայտարարագիր/համաձայնագրի ծանր ու նուաստացուցիչ պայմաններով՝ հողային կորուստ, Արցախի կարգավիճակի շարունակուող անորոշութիւն եւ Հայաստանի անվտանգութեան լուրջ խաթարում: Ասոր վրայ հարկ է աւելցնել Հայաստանի կողմէ գայն ստորագրողին ամբողջական վարկազրկումը ի դէմս թշնամու կողմէ ծաղր ու ծանակի առարկայի վերածուելուն, դաշնակից Ռուսաստանի կողմէ որպէս ատակ խօսակից արժեզրկումին եւ արտաքին այլ դերակատարներու, առաջին հերթին Մինսքի երկու միւս համանախագահներու՝ ԱՄՆի եւ Ֆրանսայի, կողմէ անտեսումին: Հարցը հոս Փաշինեանին անձը չէ, այլ ինչ որ կը ներկայացնէ վարչապետի իր պաշտօնին բերմամբ, պարզ եւ մէկին՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Պարտութեան trauma-ն ծանրացնող միւս գործօնը 44 օրեայ «Յաղթելու Ենք»ի հանդէպ վստահութիւնն էր որ պատերազմի արդիւնքին մասին ամենաիրապաշտ մօտեցում ունեցող հայ մարդն իսկ պահ մը ընկալեց եթէ ոչ բառացիօրէն այլ գոնէ ուժերու անհամեմատ անհաւասարութեամբ կռիւի ելած հայկական բանակի սիրագործութեանց գործնական արդիւնաւորումը: Արդ, որքան ալ որ ճիշտ ըլլայ այդ սիրագործութիւնը, եւ հաւանաբար այս առաջին «Հինգերորդ սերունդի պատերազմ»ի ուսումնասիրութեանց մէջ առանձին ուշադրութեան առարկայ դառնայ, առճակատման արդիւնքը որոշած նուաստացուցիչ համաձայնագիրը ստորագրելու որոշումը ջրեց հայոց բանակի քառասունչորսօրեայ հերոսութիւնը, բովանդակեց «Յաղթելու Ենք»ը, աւելի՛ն գայն հաւասարեցուց սուտի, եւ ատով ալ աւելցուց հիասթափութիւնը:

Թէ ինչո՞ւ համար Փաշինեանն այսքան ապիկար ձեւով ղեկավարեց պատերազմը ե՛լ ռազմի դաշտին վրայ, ե՛լ դիւանագիտական ոլորտին մէջ, ե՛լ միջազգային տեղեկատուական/յարաբերական աշխատանքին պարագային, ե՛լ Ափիւքի գորաշարժը պետական քաղաքականութեամբ գործնականացնելու անհրաժեշտութեան հարցով դեռ երկար քննարկումներու նիւթ պիտի ըլլայ: Քանի որ իշխանութիւնները չստեղծեցին չէզոք յանձնաժողով մը որ քննութիւն բանար պատերազմի ընթացքի, ղեկավարման եւ արդիւնքի մասին, ինչպէս բնական է ամէն կայացած պետութեան եւ ժողովրդավար կարգերու մէջ, շատ հաւանաբար չըլլայ ոչ իսկ «պաշտօնական իրականութեան» մը եւ ոչ մէկ տեղեկագիր-փաստաթուղթ որպէսզի այդուհանդերձ անխուսափելի եւ անհրաժեշտ բանավէճին ինչ որ արեւելում տայ: Հետեւաբար, պատերազմի ընթացքի, ղեկավարման եւ արդիւնքի պատճառահետեւանքային վարկածներն ու անոնց հետեւումով բանաձեւուած վերլուծումները պիտի բազմանան: Այդ վարկածներու կարգին, ուրեմն, կարելի է բանաձեւել որպէս այս պատերազմի ընթացքին Փաշինեանի ապիկար ղեկավարութեան հիմնական պատճառ՝ իշխանութեան եւ որոշումներու կայացման ծայրայեղ կեդրոնացումը իր ձեռքերուն մէջ: Անոր վրայ պիտի աւելցնել իր ինքնասիրահարուածութիւնն ու անխալակապական ինքնավստահութիւնը, զորս անցնող երկուքէկէս տարիներուն ուռճացուցին Թաւշեայ Յեղափոխութեան օրգանական մտաւորականներն ու սոցիալական ցանցերուն վրայ աշխատողներու ամբողջ բանակ մը, որ մասնագիտացած

*Սոյս էջը կը հովանաւորեն Սորամայր եւ Գոհար Քարապետեան եւ ընդամենը*



# Merry Christmas & Happy New Year



**We Will Make Your Celebration Of Food With Your Family And Friends Lovely**



**STAY TUNED FOR OUR  
MISSISSAUGA LOCATION  
GRAND OPENING**

**for more information please visit our website [arzfinefoods.com](http://arzfinefoods.com)**

էր հանրային կարծիքի ստեղծման գործին մէջ եւ իր արդիւնաւէտ աշխատանքին փաստը տուած՝ Վարչապետի ժողովրդականութեան բարձր ցուցանիշներով: Փաշինեան մերժեց ազգային ուժերու ընդլայնուած շրջանակի մը մէջ պատերազմի ընթացքին համար կենսական որոշումներ կայացնելու ալընտրանքը, որ, ծայրագոյն պարագային, կրնար թէկուզ եւ նման ծանր պարտութենէ մը յետոյ երաշխաւորել ներազգային կայունութիւնը, հաւանաբար իր իշխանութեան վրայ մնալու ընդհանուր համակերպում մը, ինչ որ համազգային վստահութեան եւ ինքնավստահութեան պահպանման եւ թերեւս վերանորոգման առիթ կու տար եւ այնքան չէր իմաստազրկէր «Յաղթելու ենք»ը: Բայց երեւի համեստութիւնը «Թաւշեղափոխական» իմաստութեանց ցանկին մաս չի կազմեր...

Ինչ կը վերաբերի «Յաղթելու ենք»ով հայ հանրային կարծիքը պատերազմի ընթացքին մասին տեղեկ պահելու որոշումին, այն ատենին հասկացողութեամբ ընկալուեցաւ որպէս ուժերու բարոյական բարձր պահելու նախանձախնդրութիւն: Հասկացողութիւն ցուցաբերուեցաւ նաեւ ռազմական դրութեան հետեւանքով պատերազմական գործողութիւններու մասին տեղեկութիւններու կեդրոնացման որոշումին մասին: Այսօր արդէն յստակ է, որ ամբողջ եղածը իշխանութիւններուն սրտամօտ PR-էն անդին չէր անցնէր: Ոչ միայն որովհետեւ իշխանութիւնները համոզուած էին որ սոցիալական ցանցերը գունաւոր յեղափոխութիւն կազմակերպելէ յետոյ նաեւ պետական քաղաքականութիւն կրնային առաջ տանել, ոչ միայն որովհետեւ Վարչապետը սոցիալական ցանցերու իր մոլորեցնելէ չէր կրնար ձեռքազատուիլ, այլ պարզապէս որովհետեւ կառավարութեան մէկ այլ փնթիւթիւնն էր նաեւ տեղեկատուական քաղաքականութիւնը հաւասարեցնել PR-ի հետ: Մինչ թշնամին երկար եւ շատ մասնագիտականօրէն պատրաստուած էր նաեւ ա՛յդ մարզին մէջ թիրախաւորելով միջազգային հանրային կարծիքը:

Պատերազմի պարտութեան trauma-ի գերազանցումը, որ կենսական է համահայկական վստահութեան եւ ինքնավստահութեան վերահաստատման համար, պայմանաւորուած է նախ պարտութեան բանականացումով: Դիւրին չէ այդ մէկը ընդհանրապէս: Բայց այդ բանականացումը անհրաժեշտ քայլն է ոչ միայն գուտ մասնագիտական իմաստով պատերազմէն դասեր քաղելու եւ յաջորդ պատերազմին աւելի պատրաստ ըլլալու համար, այլ պատերազմի խորքային անդրադարձը որպէս «հասարակական ամբողջական եղելութիւն» վերլուծելու համար: Հասկնալ trauma-էն «առաջ»ն ու «յետոյ»ն:

Օրինակները չեն պակսիր: Եգիպտոսը Վեցօրեայ Պատերազմէն յետոյ պատրաստուեցաւ յաջորդ բախումին, որ տեղի ունեցաւ Հինգ տարի անց (Եոմ Քիփուրի պատերազմ), նախագահ Սատաթին առիթ տուաւ քաղաքական յաղթանակով մը երկիրը դուրս բերելու 1967ի զինուորական պարտութենէն եւ Իսրայէլի հետ խաղաղութեան պայմանագիր ստորագրելու: ԱՄՆի մէջ Վիեթնամի զինուորական դասերը 1980ականներուն արդէն ընկալուած էին ե՛ւ զինուորական միջամտութեան նոր հորիզոններ ծրագրելու, ե՛ւ պատերազմի պայմաններուն մէջ քաղաքականութիւնն ու հանրային հաղորդակցութիւնը ռազմավարականօրէն վերամշակելու իմաստով: Խորհրդային Միութիւնը բաւական խելացի գտնուեցաւ Աֆղանիստանի մէջ իր անյաջողութեան «վիեթնամացումը» շրջանցելու համար, բայց մանաւանդ՝ այլեւս որպէս Ռուսա-

կան Դաշնութիւն քաղեց յստակ դասեր Ձեռնիոյ իր միջամտութեան արդէտէն. Փութինի օրոք, ռուսական զինուած ուժերն ու գրահատեխնիկական արդէն վերականգնած էին եւ անոր փաստը տուին 2008-ի Օգոստոսին Վրաստանի հետ իրենց զինուորական բախումէն սկսեալ: Արժաթինի զինուորական բռնատիրութիւնը Միացեալ Թագաւորութեան դէմ Մալվինեան Կղզիներու համար 1982-ի պատերազմի ջախջախիչ պարտութեան անդրադարձը զգացուեցաւ Հարաւային Ամերիկայի տարածաշրջանին մէջ ուր 1980-ականներուն ծայր առաւ ժողովրդավարութեան վերադարձի գործընթացը սկսելով Արժանթինէն: Մալվինեան Պատերազմէն յետոյ Արժանթին վերածուեցաւ մարդկային իրաւանց պաշտպանութեան միջազգային յառաջապահին: Եւ դեռ կարելի է շատ ուրիշ օրինակներ բերել:

Հայաստանի պարագային, քառասունչորսօրեայ պատերազմին դասերը առաջին հերթին բնականաբար պաշտպանական ռազմավարութեան թերիներուն կը վերաբերին: Պատերազմի ընթացքին արդէն եւ անկէ անմիջապէս յետոյ պաշտպանական հարցերով մասնագէտները կեդրոնացան թուրքազրպէյճանական կողմի օդային գերակշռութեան վրայ շնորհիւ իրենց Անօդաչու Թռչող Սարքերուն (ԱԹՍ, ինչպէս գործածութեան դրուած է բառը), որոնց չէզոքացման համար հայկական կողմը չունէր անհրաժեշտ հակօդային պաշտպանութիւնը (ՀՕՊ): ԱԹՍ-երու զանգուածային գործածութեան ազրպէյճանական ռազմավարութիւնը հազիւ թէ գաղտնիք էր: Ազգանշանը տրուած էր դեռեւս 2016-ի Քառօրեայ Պատերազմին: Ի՞նչն էր պատճառը որ հայկական կողմը չկարողացաւ նախատեսել անոնց ռազմավարական կարեւորութիւնը եւ համապատասխան պաշտպանութիւն մը չպատրաստեց: Պատասխանի փնտռուածքը առաջին հերթին լուսարձակի տակ կը բերէ պաշտպանական բանակի ռազմագէտներու աշխատանքը եւ հարցադրումները անոնց պիտի ուղղել, եթէ երբեք օր մը համապատասխան հետաքննութիւնը կատարուի:

Բոլոր ռազմական վերլուծաբանները իրենց յօդուածներուն եւ տեղեկագրութիւններուն մէջ կը նշեն թէ ԱԹՍ-ներու նման զանգուածային գործածութիւնը նախընթաց ստեղծեց եւ ազդանշանը տուաւ «5-րդ սերունդի պատերազմներ»ն ժամանակաշրջանին: ԱԹՍ-ներ նախապէս օգտագործուած են, բայց ոչ այս մասշտապով: Ազրպէյճանաթրքական նորարարութիւնը անոնց կարեւորութիւնը փաստեց ցոյց տալով որ անոնց զանգուածային օգտագործումը կրնայ չէզոքացնել այն հասարակաց համոզումը, որ պատերազմը պաշտպանական ռազմավարութեամբ ծրագրած կողմը ռազմավարական գերակայութիւն ունի յարձակող կողմին վրայ: Ամէն ինչ ցոյց կու տայ որ Արցախի պաշտպանութիւնը ծրագրող ռազմագէտները եւս համոզուած էին պաշտպանական պատերազմի գերակայութեան: Փաստօրէն, Արցախի ճակատներու ամբողջ երկայնքին կառուցուած էր «Մափնոյի գիծ մը», ինչպէս Ֆրանսա ծրագրած էր իր պաշտպանութիւնը Առաջին Աշխարհամարտէն յետոյ, ընդ որում ամէն մէկ դիրքի անկումի լուր որ հանրային կարծիքին կը հասնէր կը վերածուէր տուամի, անձկութեան: Չորս տարի առաջ, Քառօրեայ Պատերազմին, հայկական կողմի դիրքերու գիշման փաստը նսեմացուած էր քաղաքական ղեկավարութեան կողմէ: Մինչդեռ այդ կարճ պատերազմը արդէն ահագանգ պիտի հնչեցնէր պաշտպանական ռազմավարութեան վերատեսուցութեան իմաստով, փոխէր պաշտպանական ռազմավարութիւնը եւ, միաժամանակ, հայկական հանրային կարծիքի մէջ ամրակայացած այն

*Այս էջը կը հովանաւորէ Aram Etagoz, Conseiller Municipal de Renaud (Laval)*





CANADIAN DIAMONDS

TRUE LOVE. TRUE NORTH.  
STRONG & FREE



**LUGARO**

PARK ROYAL SOUTH METROPOLIS AT METROTOWN DOWNTOWN VICTORIA  
LUGARO.COM

մտապատկերը որ Արցախը բերդ մըն է որ կը կասեցնէ բարբարոսներու խուժումը պիտի փոխուէր նուէրականացնելու համար պաշտպանութեան այլ, աւելի ճկուն դիրքային կռիւի մտապատկեր մը:

Կը մնայ հիմնական հարցադրում մը թշնամիին ԱԹՍ-ներու վերաբերեալ. ենթադրելով որ այդ ռազմատեխնիկայի առկայութեան մասին հայկական կողմը ունէր անհրաժեշտ տեղեկութիւնը, ատա՞կ էր, ունէ՞ր միջոցները համապատասխան պաշտպանական ռազմավարութիւնը ծրագրաւորելու: Կրնա՞ր ձեռք բերել աւելի արդիական եւ արդիւնաւէտ ՀՕՊ: Այս հարցումները անխուսափելիօրէն լուսարձակները պիտի յղեն դէպի գլխաւոր դաշնակից, դէպի Ռուսաստան, որուն վստահաբար մօտէն հետեւեցաւ պատերազմին ռուսամասիւրելու համար իր զրահատեխնիկային գերազանցած գէնքեր: Կամ համապատասխան զինուորական գիտական հետազօտութիւնը արդէն սկսելու համար, կամ ալ բարելաւելու ԱՄՅ-երու համար իր արդէն առկայ ՀՕՊ-ը որ, ինչ-ինչ պատճառներով, զլացած էր Կովկասի մէջ իր միակ դաշնակիցին...

Բայց սխալ է պարտութեան բանականացումը սահմանափակել միայն ռազմական գործողութիւններով: Վերախմբագրելով Մառուսի վերոնշեալ բանաձեւումը, պատերազմը ոչ միայն Քլաուսեփիցեան «քաղաքականութեան շարունակութիւնն է տարբեր ձեւերով» այլ «քաղաքական ամբողջական եղելութիւն»: Պատերազմի պատրաստութիւնը կ'ենթադրէ նաեւ դիւանագիտական աշխոյժ գործընթաց եւ հանրային յարաբերական քարոզարշաւ: Ազդեցիկ ճանաթրքական ճակատը այդ երկու գետիներուն վրայ ակտիւացած էր Իլհամ Ալիեւի իշխանութեան գալէն անմիջապէս յետոյ: Այս իմաստով, այո՛, անխուսափելի է ետ երթալ մինչեւ 1994 եւ քննարկման սեղանի վրայ դնել սթաթուս քոնօ-ի վրայ գրաւ դրած հայկական կողմի մեծ սխալը, հակառակ որ այդ մասին անդրադարձներ, զգուշացումներ չպակսեցան: Պարզ՝ ազդեցիկ ճանաթրքական ճակատը ամէն իմաստով պատրաստուեցաւ յարձակողականի, հայկական կողմը ձախողեցաւ պաշտպանութեան նախապատրաստութեան աշխատանքներուն մէջ նաեւ՝ դիւանագիտական եւ միջազգային բեմին վրայ հանրային յարաբերական մարզերուն մէջ եւ չյաջողեցաւ, եւ թերեւս չփափաքեցաւ, իր ունեցած միակ մրցակցային առաւելութիւնը, զօրաշարժի ատակ Սփիւռքը, ամբողջականօրէն մասնակից դարձնել այդ գործընթացներուն: «Ռազմավարական գործընկերութիւն»ը այնպէս ալ մնաց պարագայական եւ առաւելաբար լողունգային: Մինչ Ազդեցիկ ճանաթրքական թուրքիան ստեղծեցին, զօրաշարժի ենթակիցին իրենց համայնքները, իսկ հոն ուր չկար, չէր ստեղծուած նման հաւաքականութիւն, բազմապատկեցին իրենց դիւանագիտական աշխուժութիւնը:

Հարցի քննարկման համար ակնարկը տանելով դէպի ետ եւ սեղանի վրայ դնելով 1994-էն ի վեր թոյլ տրուած եւ անտեսուած բացթողումները չի նշանակեր կող տալ Իմֆայալական իշխանութեան պատերազմի արդիւրքի յետ-ճշմարտութիւնը (post-Truth, 2016-ի Տարուան բառը ըստ Քէմպրիճի բառարանին...), ըստ որուն ամբողջ պատասխանատուութիւնը պիտի բարդել անցնող տասնամեակներու բացթողումներուն վրայ եւ նսեմացնել պատերազմի անմիջական պատասխանատու իշխանութիւններուն բաժինը: Անկախ թէ անոնք ոչի՛նչ ըրին այդ բացթողումներուն լուծում տալու համար, այլ առաւելի անտեսեցին Սփիւռքը համապատասխան նախարար-

ութեան կազմալուծումով եւ յանձնակատարի մը նշանակումով որ ոչ Սփիւռքին ծանօթ էր, ոչ ալ իր թեքնոքրաթիք սահմանափակումներէն դուրս ելլելու նպատակ ունէր սփիւռքեան նոր քաղաքականութեան մշակումի իր սկսնակ փորձերուն կամ փորձարկումներուն մէջ: Աւելի մտահոգիչ է թաւաշայ Յեղափոխութեան օրգանական մտաւորականներու կողմէ շրջագայութեան դրուած խաղաղասիրական միամիտ խօսոյթը, որուն համաձայն ազդեցիկ ճանաթրքական ժողովուրդին ուղղակի դիմելով, բարի կամեցողութեան ժողովուրդները ու մարդկային իրաւանց պաշտպաններ փնտռելով անոնց մօտ որպէս խօսակից, փորձելով համոզել անոնց որ ձեռքազատուին Ալիեւի ամբողջատիրութենէն, կամ Առաջին Տիկիններու «մեղմ ուժ»ի միջոցաւ կարելի է զսպել թշնամիին որոշումը՝ այս պատերազմը անպայման մղելու: Փաշինեանին համոզումը որ ինք գէրոյէն կը սկսի բանակցութիւնները ոչ մէկ անդրադարձ ունեցաւ Ալիեւի վրայ, ընդհակառակը շատ հաւանաբար զինք մղեց որ անդրադառնայ թէ հայկական ներքին ճակատին վրայ կայ շփոթ: Խաղաղասիրական հակումներու հարցադրումը անոնց անկեղծութիւնը չէ որ հարցականի տակ կը դնէ, ոչ ալ ռազմատենչութեան կող կ'ուղղէ: Պարզապէս կը գիտակցի աշխարհաքաղաքական այն հրամայականին, որուն համաձայն Հայաստանի կացութեան մէջ գտնուող երկրի մը համար իրապաշտ միակ քաղաքականութիւնը պատերազմին պատրաստ ըլլալն է: Մանաւանդ երբ թշնամիին չկայ այլ ազդանշան բացի անկէ որ պատերազմը անխուսափելի է:

Պատերազմի պատրաստ ըլլալու իրապաշտութիւնը իր կարգին, սակայն, պարտութեան բանականացման ճիգին մէջ յետադարձ ակնարկով չենք կրնար անտեսել դեռեւս 1994-1997ին օրին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ իր գլխաւոր խորհրդական Ժիրայր Լիպարիտեանի առաջ քաշած թէզը, ըստ որուն զիջումները պիտի ընել զօրաւոր դիրքերէ ապա թէ ոչ անոնք աւելի ցաւալի պիտի ըլլան: Նոյեմբեր 9-ին ստորագրուած յանձնուողական համաձայնագրին լոյսին տակ այսօր այդ թէզին արդիականութիւնը կարելի չէ ժխտել: Լիպարիտեան արդէն հրապարակեց իր «վեց դրոյթներ»ու յօդուածը վերադառնալով նոյն թէզին եւ կրկին շեշտեց «մտածելու ձեւ»ի փոփոխութեան մասին, որ իր 1999-ի քրքին կեդրոնական թեման է (Gerard J. Libaridian, The Challenge of Statehood. Armenian Political Thinking Since Independence, Cambridge, MA: Blue Crane Books, 1999): «Պետական մտածողութիւն»ը «Հայ Դատ»ականութեան հակադրող այդ թէզը հիմնականին մէջ հարցականի տակ կը դնէր Հայաստանի նման փոքր ու աշխարհաքաղաքականօրէն խոցելի երկրի մը կարողութիւնը՝ իր դրացիներու հետ յարատեւ տազնապի մէջ մնալու համար: Այդ կը նշանակէր մէկ կողմէ Արցախի հարցի լուծումի յանգիլ անխուսափելիօրէն վերադարձնելով ազատագրուած տարածքները եւ յարաբերութիւնները բնականոնացնելով Թուրքիոյ հետ: Այս վերջինի պարագային հեռանկարը մասնաւորաբար Հայաստանի դէպի Սեւ Մով ելքի ապահովումն էր, որով եւ անկախութիւնն ու ազգային գերիշխանութեան առաւելագոյն գործնականացումը ինքնուրոյն որոշումներ կայացնելու իմաստով սկզբունքայնօրէն պիտի աւելնայ: Այն օրերուն օրակարգի վրայ ալ չէր Մեղրիով Նախիջեւան-Ազդեցիկ ճանաթրքական կապը: Պատերազմի պարտութենէ յետոյ ազատագրուած հողերու 70 տոկոսը յանձնուեցաւ թշնամիին, Արցախը ԼՂԻՄի հողատարածութենէն ալ նուազ է, կարգավիճակի հարցը կրկին սառեցուած է, Մեղրիի վրայով

*Այս էջը կը հովանաւորեն Էլիզապէթ, Կարօ եւ Պաֆֆի Օհանյան*



# AUTOMOBILES INTER-LUX INC.



Centre de collision approuvé  
Approved Collision Centre

FRANCK ALTAN  
PRÉSIDENT

MIKE BACHEKJIAN  
DIRECTEUR DE CARROSSERIE

Mercedes-Benz



**Centre de Collision Certifié Mercedes-Benz de Laval**

2025 rue Monterey, Laval PQ H7L 3T6

Téléphone: 450-686-8866 | [info@interlux.ca](mailto:info@interlux.ca) | [collisionmblaval@interlux.ca](mailto:collisionmblaval@interlux.ca) | [www.inter-lux.ca](http://www.inter-lux.ca)

Ազրպեյճանն ու Նախիջևանը իրարու հետ կապ պիտի ունենան, եւ Հայաստանի կախուածութիւնը Ռուսաստանէն բացարձակ է:

Նախքան այս «պետական մտածողութեան» իրապաշտութիւնը այսօրուայ պարունակին մէջ դնելը, պարտութեան բանականացման այս ճիգին մէջ պէտք է դարձեալ յետադարձ ակնարկով խորհրդածել այդ իրապաշտութեան մասին՝ 1994-ի յաղթանակի լոյսին տակ: Այլ խօսքով՝ քաղաքական իրապաշտութեան հետ նկատի պիտի ունենալ Հայաստանի որպէս երկիր լինելութեան աշխարհառագմաքաղաքական իրապաշտութիւնը, որով եւ Արցախի ազատագրական պայքարը կ'իմաստաւորուէր: Փանթրքական ծրագրի կասեցումը չէր միայն այն, այլ նաեւ՝ Իրանի հետ սահմանը եւ Հայաստանի ջրային բնական շտեմարաններու, ներառեալ Սեւանայ լիճ, մատակարարումը ապահովող աղբիւրները, հանքային հարստութիւնը, Հայաստանի սննդային բաւարարման համար հողամշակութեան տարածքները, առանց մոռնալու քաղաքակրթական ու մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնը: Անցնող երեսուն տարիներու հիմնական սխալը եղաւ Արցախի ազատագրութեան ժամանակ կազմաւորուած այս աշխարհաքաղաքական մտածողութեան պաշտօնականացման ճախողութիւնը: Դարձեալ՝ այս մասին գրուած է նոյնիսկ երբ պատերազմի սպառնալիքը անիրական էր եւ յաղթանակի յաջորդած սթաթուս քուօ-ի թմբիրին մէջն էին: Հողատարածութիւններու լայնամասշտապ բնակեցումը, Արցախին անկախութեան ճանաչումը կամ Հայաստանի միացումը տեղի չունեցաւ որովհետեւ ազատագրուած տարածքները մտածուած էին որպէս բանակցութեան առարկայ, իսկ տնտեսական համակարգը, որ ստեղծուեցաւ ազատականացման եւ սեփականաշնորհումներու ճամբով, յանգեցաւ միայն հարստութեան հատուածային եւ աշխարհագրական կեդրոնացման, որով եւ հեռաւոր շրջաններու բնակեցման թէ տնտեսական շահագործման լայնամասշտապ ծրագիրներուն մէջ պետութեան դերը ինքնասահմանափակուեցաւ: Մարտահրաւէրը մնաց հիմնականօրէն Սփիւռքէն կազմակերպուած նախաձեռնութիւններու, որոնք անշահախնդիր նուիրուեցան այդ գործին հաւանաբար երբեք իրենց մտքէն չանցնելով որ պետութիւնը ատակ իսկ պիտի չկարենար ըլլալ իր միակ յանձնառութեան՝ ապահովել այդ նախաձեռնութիւններու անվտանգութիւնը...

Բացթողումի պատասխանատուութենէն զերծ չէ նաեւ պատերազմը կիրանցուցած այս իշխանութիւնը, որու գլխաւոր պատասխանատուի հրապարակային զգայնացունց յայտարարութիւնները՝ արցախցիներուն ետ բանակցութեանց սեղանի շուրջ բերելու մասին թէ «Արցախը Հայաստան է, եւ վերջ» անորոշութիւնը, հեռու էին աշխարհաքաղաքական յստակ տեսլականէ: Իմֆայական իշխանութիւններուն նէօլիպերայ ազատչուկայականութիւնը մեծ կապիտալի տնտեսակարգը օրիկարգականի անուանակոչումէն փոխեց մեծ գործատէրերու, փտածութեան մեղադրանքներու սպառնալիքով ստիպեցին որ հարկերը քիչ մը աւելի լաւ վճատուին, բայց այդ հարկերը դացին պետական մեծ ու փոքր պաշտօնեաներու պարգեւավճառներուն: Ոչ թէ ազատագրուած տարածքներու զարգացման ու վերաբնակեցման նոր մղում տալու: Ի դէպ, դժուար թէ Թաւշեայ Յեղափոխութեան տեսաբանները աշխարհաքաղաքական մտածողութեան մշակոյթ փնտռած ըլլային գունաւոր յեղափոխութիւններու դասագիրքերուն մէջ թէ դասընթացներու ժամանակ, եւ նուազ՝ գտած ըլլային: Շատ-շատ հակառուսա-

կանութիւն մը որուն ճախաւերութեան հետեւանքները աւելի քան յստակ են... Պիտի յստակացնել նաեւ որ աշխարհաքաղաքական իրապաշտութիւնը ոչ «ոչ մէկ թիգ հող» ականութիւն է, ոչ ալ ուսումնասիրութիւն, այլ՝ Հայաստանի տնտեսական թէ ընկերային զարգացումներու ճշդորոշման եւ քաղաքական որոշումներու կայացման ժամանակ արտաքին ազդակի պայմանաւորումներու կարեւորում:

Կարելի՞ էր իրարու համընկել պետական մտածողութեան քաղաքական իրապաշտութիւնը եւ Արցախի ազատագրութեան աշխարհաքաղաքական հիմնաւորումներու իրապաշտութիւնը: Հարցումը տեղադրելով անցեալ անկատար ժամանակի մէջ այնքան ալ իմաստ չունի մտաւորական թերեւս անհրաժեշտ ճիգէ մը անդին, որ այնպէս ալ տեղի չունեցաւ, կարելի չեղաւ նոյնիսկ քննարկել: Բայց ինքզինք կը պարտադրէ այսօր, եւ թերեւս աւելի քան երբեք՝ ծանր ու նուաստացուցիչ պարտութեան մը բանականացման ծիրին մէջ եւ ի մտի ունենալով Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ապագան: Եթէ այդ ապագան պիտի մտածուի որպէս հայրենիքի եւ հայութեան լինելութիւն:


Այսպէս, պարտութեան պատասխանատու իշխանութիւնները, վարչապետ Փաշինեան անձնապէս, Նոյեմբեր 10-ին իսկ գործի լծուեցան ոչ թէ պարտութեան, կամ «պատերազմներու մէջ անյաջողութիւններ» ու ինչպէս իրեն իւրայատուկ ստիպտութեամբ բառը վերասահմանեց Փաշինեանը, բանականացման աշխատանքին, այլ՝ «հնարաւոր» ինչպիսի փրկուածի հետ հաշտութեան պատումին գրառման: Վեց ամիս ժամանակ է պէտք, ըստ Վարչապետի հաշիւներուն, հանրութեան, իմա՝ «Հայաստանի հպարտ քաղաքացիին, Արցախի հպարտ քաղաքացիին եւ Սփիւռքի հպարտ հայուն», հրամցնելու պատում մը PR-ի լայնամասշտապ արշաւի ճամբով, ընդ որում պատերազմի արդիւնքի պատասխանատուութիւնը պիտի բարդուի «հին» երուն վրայ, իսկ ստեղծուած կացութիւնը պիտի հրամցուի որպէս հայութեան համար ընդունելի միակ «հնարաւոր» Հայաստանը եւ Արցախէն մնացած կտորը: Այդ պատումին նախադրեալները արդէն սկսած են շրջաքայլի որպէս հանրային (հայութեան) կարծիքը գալիքին կաթիլ առ կաթիլ պատրաստող թոյն: Եթէ Լեւոնի օրով Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացումին խոստումը դէպի Սեւ Մով ելքն էր, եթէ փրոթոքոյներուն քաշողականութիւնը թրքական շուկան էր, այսօր կացութեան բարելւման ելքը Ազրպեյճանի հետ տնտեսական առեւտուրն է, կամ, ինչպէս հայ կեանքի իրադարձութիւններուն մօտէն հետեւող մը դիտել կու տար, Հիւսիսային Պողոտայի վրայ ինքնաշարժերու վառելանիւթի սպասարկման Սոքքարի կայանի մը հաստատումը...

Պիտի ընդունիլ որ հայութեան լինելութիւնը յստակօրէն, եւ դեռեւս բառացիօրէն, սահմանափակ ու ժամանակին մէջ «Ֆիքսեցնող» մտածողութիւն մը գոյութիւն ունեցած է հարիւր տարի առաջ: Այն ժամանակ, պոլշեւիկ-քեմալական ժամանակաւոր դաշինքը վճռած էր Հայաստանի Հանրապետութեան ճակատագիրը եւ թրքական յարձակողականը սկսած էր Սեպտեմբեր 28-ին: Թուականը հազիւ թէ զուգադիպութիւն է, ինչպէս զուգադիպութիւն չէ Շուշիի շատ կասկածելի անկումին թուականն ու եռակողմանի յայտարարութեան ստորագրութիւնը Նոյեմբերի 9-ին: Եւ մինչ ազրպեյճանաթրքական հաւաքական յիշողութեան մէջ անցեալը ներկայ է եւ ապագայ, պատերազմին պարտութիւնը լոկ «անյաջողութիւններ» ու բացատրող «հնարաւոր» հայրենիք

*Այս էջը կը հովանաւորեն Մովսէս Եւ Մանուկ Քոստան*



# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



TRY HEARING AIDS  
**RISK-FREE**

Call 416 754-4327

## **\*NEW ADDRESS**

702 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3B9  
Tel: 416 463-4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,  
#29 Toronto, ON, M1R 4B7  
Tel: 416 754-4327 (HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)




- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



# hearing aid source

*invisible, custom & comfortable*



կերտելու («պէտք է փորձել երկխօսութիւն սկսել յաղթող կողմի՝ Պաքուի հետ», Անդրանիկ Քոչարեան) Իմֆայակաւաններու պատումը կը ձգտի լուեցնել յիշողութիւնը:

Պատերազմի պարտութեան պատասխանատու իշխանութիւններ իրենց հրամցուած սցենարներէն տարբեր մեկնակէտով բանակցելու ալընտրանք չունին, արհամարհուած են եւ ոչ ռազմավարականօրէն մտածելու կարող են, ոչ ալ օրակարգային հարցերու տարբեր առաջարկներ կրնան դնել սեղանին վրայ: Փաշինեանի հրաժարականի պահանջով ծնունդ առած հայրենիքի փրկութեան շարժումը զգուշացում էր, զիտակցութեան հրաւէր՝ բանակցութիւններով նորանոր զիջումներու վտանգի առկայութեան: Թէկուզ եւ անմիջականօրէն իրապաշտ չէ եռակողմանի համաձայնութեան պայմանները շրջափոխել, այդուհանդերձ, ինչպէս հարիւր տարի առաջ, այսօր ալ Զանգեզուրը փրկելու անմիջական պայքար մը կայ:

Անոր յաջողութեամբ պայմանաւորուած է հայրենիքի եւ հայութեան լինելութեան հեռանկարի վերակենդանացումը:

Նացիներու դէմ պայքարած Ֆրանսացի ազատամարտիկներու յիշատակին նուիրուած Լուի Արակոնի քերթուածին մէջ «այս կեանքէն ճանճրացա՞ծ ես» հարց կու տան զինուորները բանտին մէջ իրենց գերեվարած զիմազրող մարտիկին, եւ կ'առաջարկեն որ ան մատնէ իր ընկերներու, տեղի տայ (Capitule...), եւ ապա իր կեանքը շարունակէ «ծնկաչոք»: «Եթէ հարկ է վերսկսիլ, նոյն ճամբան» կ'ընտրեմ», կ'ըլլայ ազատամարտիկին պատասխանը: Կրնա՞նք, ինչպէս հարիւր տարի առաջ, վերսկսիլ մեր նոյն ճամբան, աւելի իրապաշտ, անցեալի դասերը քաղելով, պարտութեան պարտադրած «հնարաւոր» է մը անդին՝ հայրենիքի ու հայութեան լինելութեան նոր պատումը գրելով:

Խ. Տէր Ղուկասեան

*Միս էր կը հովամաւորեն Մախի տւ Միսորիկ Միսորնետան*





MAZDA  
**GABRIEL**

PENSEZ MAZDA...PENSEZ GABRIEL



CX-5 2021



MAZDA3 2021



MAZDA3 SPORT 2021



CX-30 2021



CX-9 2021

MAZDA  
**GABRIEL**  
ANJOU

Mazda Gabriel Anjou  
7050, boul. Henri-Bourassa Est  
Anjou H1E 7K7  
(514) 328-7777

MAZDA  
**GABRIEL**  
ST-JACQUES

Mazda Gabriel St-Jacques  
5333, rue Saint-Jacques  
Montréal H4A 2C9  
(514) 484-7777

MAZDA  
**GABRIEL**  
ST-LAURENT

Mazda Gabriel St-Laurent  
5850 chemin de la Côte-de-Liesse,  
Montréal H4T 1B2  
(514) 256-7777

# Տէրսիմի մէջ ՀՅԴ գործունէութեան առնչուող պատմական ուրուագծեր

ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութեան յաջորդող առաջին տասնամեակին Տէրսիմը եղած է կուսակցութեան ուշադրութեան շրջագիծին մէջ: Դաշնակցութեան երկրորդ Ընդհանուր ժողովը ազգային-ազատագրական պայքարի կազմակերպական աշխատանքներուն մէջ կը ներառէր նաեւ պատմական Ծոփաց աշխարհի Տէրսիմ գաւառը, որ ունէր հայ եւ ալեւի-քիզիլպաշ միախառն բնակչութիւն:

Հայ եւ օտար պատմաբաններ կը հաստատեն, որ Տէրսիմի ալեւի շարք մը ցեղախումբեր ժէ դարուն սկզբնաւորութեան հաւատափոխ դարձած եւ իսլամութեան շիա յարանուանութեան ալեւի ճիւղաւորման դաւանանքը ընդունած բնիկ հայերու շառաւիղներն են: Լեռնային Տէրսիմի մէջ 19-րդ դարուն իր գոյութիւնը պահպանած է Միրազեան հայկական ցեղախումբը: Շիա իսլամութեան եւ շիա յարանուանութեան մասնագէտ, ասորի պատմաբան Մաթի Մուսայի հաստատումով՝ դարերու ընթացքին կրօնական հալածանքներէ խուսափելու համար բազմահազար հայեր, Տէրսիմ հաստատուելով եւ տեղացի քիզիլպաշ ցեղախումբերու շիա կրօնքը ընդունելով, հաւատափոխ դարձած են եւ սակայն պահած քրիստոնէական կրօնքի շարք մը աւանդութիւնները (1): Լեռնային Տէրսիմի ըմբոստ բնակչութիւնը դարերու ընթացքին միշտ հակադրուած է Օսմանեան պետութեան:

Դաշնակցական գործիչներու՝ դէպի Տէրսիմ գործուղումները թափ ստացած են 1896-1898 թուականներուն: Այդ ժամանակահատուածին կուսակցութեան զինեալ պայքարի հիմնական կիզակէտն ու կեդրոնացումը կը հանդիսանային Վասպուրականը, Սասունն ու Տարօնը: Տէրսիմը կազմակերպելու հարցը առաջին անգամ կ'առաջադրուէի ՀՅԴ Բ. Ընդհանուր ժողովին, որուն ներկայ եղած է Դաշնակցութեան հիմնադիր սերունդը:



1896ի դեկտեմբեր 27ին կայացած էր Դաշնակցութեան կովկասեան ռայոնական ժողովը: Ժողովի 22 նիստերու ընթացքին քննարկուած էին Քարաթայոյի (Տէրսիմ) եւ Լեռնավայրի (Կիլիկիա) շրջանները կազմակերպելու հարցերը: «Ժողովը, աչքի ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովուրդին յեղափոխական ուժը եւ ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այս պոնկտի վրայ եւ հոն ուղարկել կազմակերպող-ղեկավարող ուժ մը: Գալով Քարաթայոյին՝ ժողովականներէն մէկ քանին թերահաւատութիւն յայտնեցին, հիմնուելով այն բանի վրայ, որ կարելի չէ լիովին հաւատալ ժայռեցիներու անկեղծութեան եւ մշտական բարեկամութեան, որով այդտեղի գործը գուցէ եւ հայկական չհամարուի եւ այլն: Սակայն ժողովականներէն երեք հոգիներ, թէ՛ անցեալէն եւ թէ՛ ներկայէն համոզեցուցիչ փաստեր բերելով, մատնացոյց կ'ընեն այն իրողութիւնը, որ ցանկալի ձեռնարկութիւնը արդէն կէս մը կատարուած է, եւ Քեռին իր ամբողջ խումբով Քարաթայոյ հասած ու լաւ ընդունելութիւն գտած անոնցմէ, փարատեցին բոլոր կասկածները: Ուստի ժողովը որոշեց ժայռն ալ գործունէութեան կեդրոն մը համարել ու իր նիւթական միջոցներուն համեմատ ուշքը դարձնել անոր վրայ ալ» (2):

Տէրսիմի Քեռին (Ռուբէն Շիշմանեան) հայերու եւ Տէրսիմի ալեւիներու մերձեցման առաջին ջատագովներէն եւ Տէրսիմի հայդուկային առաջին խումբի կազմակերպողներէն եղած է:

ՀՅԴ Կովկասեան ռայոնական ժողովի նախօրեակին, ՀՅԴ Բիւրոյի կարգադրութեամբ, Կովկասէն Երզնկա գործուղուած էր Կարապետ Ղումրիկեանը՝ որպէս գործիչ՝ յատուկ յանձնարարութիւն ունենալով համագործակցութեան եզրեր ստեղծելու Տէրսիմի ալեւիներուն հետ (3):

1896 թուականին ՀՅԴ Կարնոյ կեդրոնական կոմիտէին ուղղուած մարտ 29 թուակիր նամակով մը Քեռին կը հաստատէ կեդրոնական կոմիտէէն 25 ոսկի ստացած ըլլալը, որ պիտի յատկացուէր Տէրսիմի մէջ Դաշնակցութեան արմատաւորման ծրագիրներուն: Նոյն նամակին մէջ Քեռի կը գրէ, որ Տէրսիմի կուսակցական ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է 250-300 ոսկի (4):

Թաւրիզի կոմիտէին ուղղուած 1897 յունուար 10 թուակիր նամակով մը հայդուկապետ Տիգրան Տէրոյեան անդրադարձած է Տէրսիմի Քեռիին. «Քեռին անցած է Տէրսիմ (Քարաթայոյ), այնտեղ է եւ Ղարամելիքը. յոյս կայ յաջողութիւն գտնելու այդ վայրերուն մէջ: 1000 մանեթ եւ 100 օսմանեան ոսկի յատկացուած է այդ տեղին համար: Տրապիզոնի կոմիտէն ալ մասնակից է այդ գործին» (5):

Վերոնշեալ փաստերը ի մի բերելով՝ ակնյայտ կը դառնայ, որ Դաշնակցութիւնը, թէ՛ գործիչներու՝ Տէրսիմ գործուղումներով եւ թէ՛ այդ առաքելութեան յաջողութեան համար նիւթական աղբիւրներ տրամադրելով, հետամուտ էր կուսակցական գործունէութիւնը արմատաւորելու եւ ընդլայնելու

*Այս էջը կը հովանաւորեն Գաբիէ Եւ Դաւիթ Կիւրճեան*





Ռուբէն, Կորիւն, Տէրսիմի Քեռի եւ Մեշեռի Աւետիս

Տէրսիմի մէջ:

1898ին Թիֆլիսի մէջ կայացած ՀՅ Դաշնակցութեան Բ Ընդհանուր ժողովին կը մասնակցի Տէրսիմի Քեռին: Այս ժողովին քննարկման բովէն կ'անցնին Սուլթան Համիտի հետ բանակցութիւններու հարցը, շրջաններու կազմակերպումը, ունեւոր հայերէ նիւթական ապահովելու խնդիրն ու այլ կարեւոր հարցեր: ՀՅԴ գերագոյն ժողովներէն ամէնէն անկիւնադարձայինն ու պատմականը հանդիսացող այս ժողովին ներկայ եղած էին 19 պատգամաւորներ եւ 13 գործիչներ, որոնց շարքին՝ Քրիստափորը, Ռոստոմը, Զաւարեանը, Արշակ Վառնեանը, Արմէն Գարոն եւ Նիկոլ Դումանը: Իբրեւ կուսակցական գործիչ՝ ժողովին հրաւիրուած Քեռին կը շեշտէ Տէրսիմի գազախաօս արեւի ցեղախումբերուն հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը, որպէսզի Օսմանեան կայսրութեան դէմ յեղափոխութիւնը աւելի ծաւալուն եւ բազմաբեւեռ դառնայ: Ընդհանուր ժողովը Քառաժայրի (Տէրսիմ) շրջանը կազմակերպելու գործը կարեւորելով՝ գործիչային դրութիւնը շարունակելու որոշում կ'առնէ, եւ ծրագրի իրագործման համար պիւտձէ կը տրամադրէ (6):

Ժողովէն ետք Քեռին կը մեկնի Տէրսիմ: Քիզիլպաշներու գազա լեզուին քաջածանօթ Քեռին հանդիպումներ կ'ունենայ Տերսիմի Գուրէշան եւ Հասանան քիզիլպաշ ցեղախումբերու ղեկավար Սէյիտ Ռիզայի (1862-1937) հետ:

Այս հանգրուանին Դաշնակցութեան առաջնահերթութիւնը կը հանդիսանար Վասպուրականի, Տարօնի եւ Սասնոյ հայ բնակչութեան ինքնապաշտպանութեան կազմակերպումը, որուն հետեւանքով կը դանդաղի Տէրսիմի ծրագիրը, իսկ կուսակցութեան նիւթական միջոցները կը տրամադրուին վերոնշեալ երեք կազմակերպական շրջաններու գործունէութեան զարկ տալու (7):

1900 թուականին Քեռի կը վերադառնայ Երզնկա, ուր, շատ չանցած, թուրք կառավարութեան կողմէ կ'ամբաստանուի քիւրտ աղայի մը սպանութեան յանցանքով: Երեք տարի բանտարկուելէ ետք՝ 1903 յուլիս 10ին, թուրք զինուորներու ուղեկցութեամբ կը տարուի Երզնկայի Յորենի հրապարակը՝ կախաղանով մահուան դատապարտուելու: Տէրսիմի Քեռին թող չի տար, որ դահիճը իր գործը կատարէ. իր ձեռքով վզին կ'անցընէ կախաղանի օղակը եւ, ոտքով հրելով աթոռը, արիւաբար կը դիմագրաւէ մահը (8):

Տէրսիմի Քեռիի մահէն մէկ տարի ետք ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»ի մէջ կը յիշատակուի Քեռիի գործիչային առաքելութեան արդիւնք՝ Դաշնակցութեան եւ արեւի ցեղախումբերու համագործակցութեան մասին: «Նամակ Քղիէն» խորագիրը կրող թղթակցութիւնը կը պատմէ Դաշտային Տէրսիմի Քղի գաւառի խումբերու գիւղի ինքնապաշտպանութեան մասին, որուն ընթացքին դաշնակցական զինեալ տղաք եւ տէրսիմցի Հայտար պէյը իր զինեալներով միասնաբար կը դիմադրեն եւ ետ կը մղեն թուրքերու եւ քիւրտերու յարձակումը: «Ժամանակները փոխուած են: Ընդհանուր կոտորածին, երբ Բաղուի թիւրքը եւ շխասանցի քիւրտը, Քղիի շատ մը տեղեր աւարի տալով, մեր խումբերու գիւղը եկան (խումբերու 400 տուն զուտ հայաբնակ գիւղ մըն է), Տէրսիմի խումբը իր գաւառի Շահուսէյն պէյի տղան՝ Հայտար պէյը, որ թիւրք կառավարութեանէն գայմազամութեան պաշտօն ալ ունի, իր մարդիկներով մեր գիւղը եկաւ եւ մեր քանի մը հայ երիտասարդներու հետ դիմադրեց խուժանին: Թիւրքերը եւ քիւրդերը երբ տեսան, որ մեր գիւղը ինքնապաշտպանութեան կը դիմէ, իրենցմէ քանի մը քիւրդ եւ թիւրք մեռած ու վիրաւոր թողնելով, գացին: Շնորհիւ Հայտար պէյի եւ մէկ քանի Հ. Յ. դաշնակցականներու՝ գիւղը այն անգամ կոտորածէ եւ կողոպուտէ ազատեցաւ: Հայտար պէյը բաց է բաց ըսաւ. «Մենք սկզբին թիւրք կառավարութեան աչքին առջեւ ինքնիշխան ցեղ մըն էինք, բայց Տէրսիմի փաշան ժամանակին մեր պապերու օրով սուլթանի հրամանով Տէրսիմը նուաճելու եկաւ. թիւրք փաշան մեզի եկաւ, բայց մենք՝ գազա ցեղերս, թիւրք կառավարութեան ո՛չ տուրք, ո՛չ զօրք կու տանք եւ ո՛չ ալ կ'ուզենք կառավարութեան ձեռքը գործիք դառնալ եւ նեղել մեր դրացի հայերը: Հակառակ պարագային, եթէ խռովութիւն ծագի, ինչպէս անցեալ տարի, հիմա ալ պէտք եղած տեղերը հայերը պիտի պաշտպանեն»:

Տէրսիմի գազա քիւրտը իր դրացի հայուն համար պաշտպան կը կայնի, իսկ մեր հարուստ հայը կը լքէ իր ազգակից եղբայրը, ձեռքէն եկած ամէն վատութիւն կ'ընէ՝ կառավարութեան աչքին սիրելի երեւալու համար» (9):

Այս ժամանակահատուածին կուսակցականներու գործուղումը Տէրսիմ, ըստ երեւոյթին, վերստին թափ կը ստանայ: ՀՅԴ Ամբերիկայի կեդրոնական կոմիտէին ուղղուած՝ ՀՅԴ խորհուրդի (Քղի) կոմիտէի 18 հոկտեմբեր 1905 թուականի դիմում-

*Այս էջը կը հովանաւորեն Մուրադ Թէյ եւ Նորա Կօնճեան*



նագիրին մէջ կը յիշատակուի դաշնակցական գործիչներու մասին: Դիմումագիրը հաստատուած է ՀՅԴ Կարնոյ կեդրոնական կոմիտէի կնիքով: «Քղի մեր ընկերները յարաբերութեան մէջ են Տրապիզոնի, Կարինի եւ Երզնկայի հետ եւ կայեր հաստատելու վրայ են շրջականերու հետ մինչեւ Բալու եւ Չարսանճաք: Այնտեղի մեր գործիչ ընկերը կը պատրաստուի այս ամառ այցելելու մինչեւ Տէրսիմ, եթէ միայն մեր կողմէն ծախքերը հոգացուին: Եթէ տարեկան որոշ գումար մը յատկացուի, Խորաձորի այս մարմինի միջոցով պիտի կրնանք կազմակերպել հետզհետէ բոլոր շրջակայ գաւառները» (10): Այստեղ պէտք է շեշտել Քղիի աշխարհագրական կարեւորութիւնը, որովհետեւ աւելի քան 50 հայաբնակ գիւղերով Քղիի վարչատարածքը արեւմուտքէն անմիջական սահմանակից է Տէրսիմ գաւառին:

Դաշտային Տէրսիմի Չարսանճաքի վարչատարածքին մէջ դաշնակցական գործիչ եղած է Մեշետի Աւետիսը (Աւետիս Գազանճեան): Բնիկ տէրսիմցի Մեշետի Աւետիսը յատուկ առաքելութեամբ Տէրսիմ կը գործուղուի 1904ին, սակայն Քղիի մէջ կը ձեռքարկուի թրքական կառավարութեան կողմէ: Չորս տարի բանտարկուած մնալէ ետք՝ սահմանադրութեան օրերուն, ներման կ'արժանանայ: 1909ին կը մասնակցի ՀՅԴ Լեւոնասարի կեդրոնական կոմիտէի շրջանային ժողովին, ուր Չարսանճաքի գիւղերը կազմակերպելու յատուկ որոշում կը կայացուի, եւ առաքելութիւնը կը յանձնուի Մեշետի Աւետիսին եւ Տիգրան Չիթճեանին, որոնք, անմիջապէս գործի լծուելով, կը մեկնին Չարսանճաք (11): Սասնոյ կռիւներուն մասնակցած այս քաջարի ֆետային ցեղասպանութեան օրերուն Տէրսիմի մէջ կը ձեռքարկուի թուրք գինուորներու կողմէ, որոնք, Մեշետի Աւետիսի վիզէն ծանր քար մը կապելով, կը գլորեն գինք Մնձուրի կամուրջէն:

Շնորհիւ Մեշետի Աւետիսի նման գործիչներուն՝ ՀՅ Դաշնակցութիւնը Մեծ եղեռնի նախօրեակին կազմակերպական ներկայութիւն էր Դաշտային Տէրսիմի մէջ՝ Մեծկերտ,

Քղի եւ այլուր: Աւետիսի գործակից Կիրակոս Պոյաճեանը Տէրսիմի Սվճող գիւղին մէջ հիմնած է ՀՅԴ «Տաճար» կոմիտէութիւնը (12): Գէորգ Երեւանեանի «Պատմութիւն Չարսանճաքի հայոց» ստուարածաւալ յուշամատենին մէջ Դաշտային Տէրսիմի Բերրի գիւղաքաղաքի՝ Եղեռնի ցանակագրուած նահատակներուն մէջ կը նշուին դաշնակցական կուսակցականներ, որոնց շարքին՝ պատմութեան ուսուցիչ Արմենակ Մելիտոսեանը, զինատարութեան գործին մասնակից Պետրոս Բուջիկեանը, Կրթական մարմնի ատենապետ Հայկ Ենովքեանը, Բերրիի քաղաքական ժողովի անդամ Մարտիրոս Դագէսեանը:

Հայոց ցեղասպանութիւնը ուսումնասիրած շատ մը պատմագիրտական աղբիւրներ կը հաստատեն, որ Մեծ եղեռնի օրերուն Լեւոնային Տէրսիմ ապաստանած են աւելի քան 30 հազար հայեր: Տէրսիմի քրիզիլպաշ ալեկիներու եւ անոնց՝ հայերու հանդէպ տածած բարեացակամութեան մասին ուշագրաւ է «Դրօշակ»ի մէջ հրատարակուած 20 նոյեմբեր 1906 թուակիր Չմշկածագի տեղեկագրին մէջ տեղ գտած վկայութիւնը. «Ազատ լերան ազատ գաւառները ենթակայ չեն թիւրքական լուծին եւ իրենց լեռներու բարձրութենէն իրաւունք ունին խրոխտաբար նայելու հայերու վրայ եւ, անշուշտ, գոհունակութիւն զգան՝ տեսնելով, որ թէեւ իրենց նախնիքը ժամանակին փոխած են իրենց կրօնական դաւանանքը, հրաժարած են հայ անունէն, բայց այժմ մնացեր են ազատ, հպարտ ու խրոխտ... Ընդհանրապէս կ'ատեն սիւննի թիւրքերը եւ համակրութեամբ կը վարուին քրիստոնեաներու, մասնաւորապէս հայերու հետ, որոնց հետ շատ մը վայրերու մէջ շփման մէջ են» (13):

Դաշնակցութիւնը սերտօրէն գործակցած է Տէրսիմի արեւելքը գտնուող Պինկէօլ նահանգի քրիզիլպաշ Խորըմընկ ցեղախումբի առաջնորդ աշիրաթապետ Զէյնալի հետ: Խորըմընկցիներու հետ առաջին կապերը կը հաստատէ Գոմսայ Կորիւնը, որ Սասնոյ Բ ապստամբութենէն ետք կ'անցնի Պինկէօլ՝ խորըմընկցի աշիրաթապետ Նիազիի մօտ, եւ կը կազմակերպէ քրտական կոմիտէ (14): Նշենք, որ Կորիւն, 1906ին Կովկաս գործուղուելով, կը կազմակերպէ Զանգեզուրի եւ Արցախի շրջանները: Կորիւնի եւ Զէյնալի առաջին հանդիպումը կը կայանայ 1905ին: 1908ի սահմանադրութենէն ետք Ռուբէն (Տէր-Մինասեան) եւ Կորիւն կը մեկնին Պինկէօլ եւ Զէյնալի հետ կ'ամրապնդեն համագործակցութիւնը: Զէյնալ հայ-քրիզիլպաշ համագործակցութիւնը ամրապնդելու համար կ'առաջարկէր խառն ամուսնութիւններ կնքել երկու ժողովուրդներուն միջեւ (15):

Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ կայացած ՀՅԴ Դու-

**Ազատ լերան ազատ գաւառները ենթակայ չեն թիւրքական լուծին եւ իրենց լեռներու բարձրութենէն իրաւունք ունին խրոխտաբար նայելու հայերու վրայ եւ, անշուշտ, գոհունակութիւն զգան տեսնելով, որ թեւ իրենց նախնիքը ժամանակին փոխած են իրենց կրօնական դաւանանքը, հրաժարած են հայ անունէն, բայց այժմ մնացեր են ազատ, հպարտ ու խրոխտ... Ընդհանրապէս կ'ատեն սիւննի թիւրքերը եւ համակրութեամբ կը վարուին քրիստոնեաներու, մասնաւորապէս հայերու հետ, որոնց հետ շատ մը վայրերու մէջ շփման մէջ են**

*Այս էջը կը հովանաւորեն Արքայ տէր Արքայապետը*





# Crown Pastries

Fine Middle Eastern Pastries

#1 Baklava in Toronto



**OPEN DAILY**

Monday to Sunday from 9 a.m. to 10 p.m.



**BEINNAREN**



**ESH AL ASHFUR**



**BAKLAVA**



**MAMMOUL**



**SWEET CHEESE**

Specializing in pistachio, cashew, almond, walnut, and hazelnut baklava & other regional pastries and sweets. Everything is hand-made from scratch, using the finest ingredients and prepared fresh daily.



Call (647) 351-2015

2086 Lawrence Ave. East | Scarborough, ON

[www.crownpastriesbaklava.com](http://www.crownpastriesbaklava.com)

**NEW LOCATION**

5083 Dixie Rd d3, Mississauga, Ontario  
(905) 602-2018





րան-բարձրաձևադակի շրջանային ժողովը կ'որոշէ Ձէյնալը նկատի ունենալ որպէս Դաշնակցութեան ներկայացուցիչ շրջանի քիզիլպաշներու հետ յարաբերութեանց ծիրէն ներս (16):

Վերոնշեալ արխիւային վաւերաթուղթերն ու վկայութիւնները կու գան հաստատելու, որ ՀՅ Դաշնակցութիւնը հայ ազատագրական պայքարի շարժումը կազմակերպելու իր մարտավարութեան մէջ ընդգրկած է քիզիլպաշ ցեղախումբերու հետ համագործակցելու եւ դաշինքներ ստեղծելու ուղեգիծը, միաժամանակ այդ ցեղախումբերու աշխարհագրական տարածքներուն վրայ գտնուող հայկական բնակավայրերը կազմակերպելու գործը յատուկ ուշադրութեան առարկայ դարձուցած է:

Ինչպէս սոյն յօդուածի խորագիրը կը թելադրէ, նշուած փաստագրութիւնները քանի մը ուրուագծեր են ՀՅ Դաշնակցութեան եւ Տէրսիմի այլեւի ցեղախումբերու միջեւ համագործակցութեանց պատմական հողովոյթին: Այստեղ պէտք է նշել, սակայն, որ եթէ 1937ի Տէրսիմի ըմբոստութենէն երեք տասնամեակ առաջ ապստամբութեան ղեկավար եւ տէրսիմցիներու առաջնորդ Սէյիտ Ռիզան համագործակցած է դաշնակցական ֆետայի գործիչ Քեռիի հետ, մեծ է հաւանականութիւնը, որ Տէրսիմի ապստամբութեան ժամանակահատուածին ՀՅԴի հետ կայացած է համագործակցութիւն: Դաշնակցութեան պատմագրական աղբիւրներու մէջ կը յիշուի «Նեմեսիս» գործողութեան մասնակից, հետագային Սուրիոյ խորհրդարանի անդամ Հրաչ Փափագեանի անունը՝ որպէս Տէրսիմի հետ կուսակցական յարաբերական կապ 30ական թուականներուն: Դժբախտաբար, երախտաշատ դաշնակցական ընկ. Հրաչ Փափագեանը այդ մասին որեւէ յուշագրութիւն կամ գրական աւանդ չէ թողած: Հաւանաբար ժամանակն է, որ ՀՅԴ արխիւներու ծալքերուն մէջ յամեցող 1930ական թուականներու ՀՅԴ-Տէրսիմ համագործակցութեան պատմութիւնը լուրջ ուսումնասիրութեան արժանանայ:

**Մանօթագրութիւններ**

- 1) Տե'ս Մատի Մուսա, Extremist Shiites: The Ghulat Sects, Նիւ Եորք, 1987, էջ 433:
- 2) Ա. Լ. Ե. Յեղափոխական ալպում, Պէյրութ, 1966, էջ 333:
- 3) Տե'ս Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեպելլօ, 1993, էջ 15:
- 4) Տե'ս «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», Ա. հատոր, Պոսթըն, 1934, էջ 325:
- 5) Տե'ս «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», Բ. հատոր, Պոսթըն, էջ 353:
- 6) Տե'ս « Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան », Բ. Հատոր, Պոսթըն, էջ 226:
- 7) Տե'ս Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Մոնթեպելլօ, 1993, էջ 17:
- 8) Տե'ս «Դրօշակ», 1903, Սեպտեմբեր, թիւ 9, էջ 126:
- 9) «Դրօշակ», 1904, Յունիս, թիւ 6, էջ 82:
- 10) «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Դ. Հատոր, Պէյրութ, էջ 190:
- 11) Տե'ս Երեւանեան Գ., Պատմութիւն Զարսանճափ հայոց, Պէյրութ, 1956, էջ 406:
- 12) Տե'ս նոյն տեղը, էջ 213:
- 13) «Դրօշակ», 1907, Փետրուար, թիւ 2, էջ 20:
- 14) Տե'ս «Դրօշակ», 1926, Օգոստոս-Հոկտեմբեր, թիւ 8-10, էջ 255:
- 15) Տե'ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե. Հատոր, Թեհրան, 1982, էջ 67:
- 16) Տե'ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Դ. Հատոր, Թեհրան, 1982, էջ 27:

Վահագն Գարագաշեան

*Այս էջը կը հովանաւորեն Մահազն եւ Սարգիս Ծամխան*



# Pharmacie Kanou et Marachian

Affiliée à



## Jean Coutu

### SETA MARACHIAN

Pharmacienne-Propriétaire

Հայերէն  
կը խօսինք



5855 BOUL. GOUIN OUEST, CARTIERVILLE (QUÉBEC) H4J 1E5  
TÉL : (514) 334-8641 FAX : (514) 334-6909

Հայ մասնագետներ տրամադրուած՝ հոգալու ձեր բոլոր կարիքները  
Կը պատրաստենք ձեր բոլոր դեղագիրները, նոյնիսկ ուրիշ դեղարաններէ  
Տարեցներու համար յատուկ 10% զեղչ (բացառեալ դեղերը)

### Vaccination contre la grippe saisonnière Service professionnel et personnalisé

- Infirmière sur place (1 journée par semaine)
- Conseils sur le diabète: suivi de la glycémie (taux de sucre), exercice et diète avec remise de documents éducatifs (ex:guide alimentaire canadien)
- Suivi de la tension artérielle avec l'infirmière
- Installation du moniteur ambulatoire de la pression artérielle sur 24h : MAPA
- Vaccination et injection par l'infirmière
- Santé voyage: prévention de la malaria et de la diarrhée du voyageur

Livraison et cueillette de prescription gratuites de Montréal et Laval

- OUVERT 7 JOURS SUR 7 DE 9H À 22H -

# Հայաստանը կովկասեան տարածաշրջանի Գործնական քրապտոյտին մէջ

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ կը գտնուինք մեծ ջրբաժանի մը առջեւ, որ յղի է անգուշակելի հետեւանքներով: Տեղի կ'ունենայ ուժերու աննախընթաց վերադասաւորում տարածաշրջանին մէջ խախտելով ցարդ գոյութիւն ունեցող ուժային հաւասարակշռութիւնները եւ Հարաւային Կովկասը դնելով նոր հրամայականներու առջեւ: Այս պայմաններու մէջ, նախատեսութեան ամէն ճիգ բնականաբար պիտի բարի անկարելիութեան, քանի որ շատ բան դեռ հեռու է մեր հասողութենէն: Այնուամենայնիւ մեր խնդիրն է գործել զգաստ գնահատականներով ջանալով մեկնաբանել գէթ տեսանելին եւ յուսալով, որ կարելի պիտի ըլլայ կանխել յոռեգոյնը եւ ի վերջոյ ընտրել ճիշտ ուղին մեր երկրին համար:

Առաջին հերթին, պէտք է հարց տալ, թէ ինչո՞ւ ուսական «խաղաղապահ ուժերը» առաւելագոյն փոյթով մուտք գործեցին Արցախի, Հայաստանի եւ երբեմնի ազատագրուած տարածքներու սահմաններէն ներս եւ ամրացան ռազմավարական կարեւոր դիրքերու վրայ: Ու նաեւ հարց տալ, թէ ի՞նչ սպարազինութեամբ եկան անոնք եւ ի վերջոյ ի՞նչ բան իրագործելու կարողականութեամբ եւ նախատեսութեամբ: Եւ վերջապէս պէտք է ջանանք հասկնալ, թէ ի՞նչ են Մոսկուայի իսկական դիտաւորութիւնները Կովկասի եւ յատկապէս Հայաստանի եւ Արցախի մէջ նոյեմբեր 9-ի Եռակողմանի Համաձայնագրի ստորագրուելէն ետք:

Պէտք է միաժամանակ քննել իրանեան ուժերու ներկայ պատրաստականութիւնն (preparedness) ու շարժումները Արաքսի իրանեան ափերուն վրայ եւ փորձել հասկնալ իրանեան մղձականջին բնոյթով:

Պարզ խօսքով, Հիւսիս-Հարաւ Առանցքի երկու հզոր միւսերը՝ Ռուսաստանն ու Իրանը, որոնք ընտրել էին կրակոտական դիրքերէ գործելու քաղաքականութիւնը այն իսկ օրերուն, երբ Ազրպէյճան, Թուրքիա եւ Իսրայէլ միացեալ ուժականութեամբ կը փշրէին հայկական առաջնագիծը, յանկարծ կրկին կը յայտնուին նախաձեռնողական դիրքերու վրայ... Հարցն է՝ ինչո՞ւ այսքան ուշ եւ ի՞նչ նոր հրամայականներու եւ առաջնահերթութեանց անսալով:

Այժմ նաեւ քննենք, թէ ի՞նչ մթնոլորտ կը տիրէ այսօր Թուրքիա-Ազրպէյճանական ճամբարէն ներս: Ազրպէյճան եւ Թուրքիա ներկայիս կը գտնուին տօնական դիմումութեան մէջ: Արդէն ծանուցուած է Թրքական երգերու մեծ փառատօն մը 2021 թուին Շուշիի (ներեցէ՛ք՝ Շուշայի) մէջ: Ազադակող իրականութիւնը այն է, որ Ռուսաստան եւ Իրան այս երկուքին շնորհեցին անսպասելի եւ եւ խորհրդաւոր եւ յաղթանակ մը Կովկասի սրտին վրայ, զոր Հայաստան եւ Արցախ ամէն ինչ ըրին անկարելիութեան մատնելու, բայց չկրցան... Թշնամին եւս «զարմացած» կը թուի, թէ ինչպէ՞ս տարիներէ ի վեր անչեղ համախոհութեամբ գործող Հիւսիս-Հարաւ Առանցքի տէրերը (Մոսկուա եւ Թեհրան) յանկարծ լքեցին հայկական գինեալ ուժերը թշնամի եռեակի ռազմական հսկայ կարողականութեան դիմաց եւ անհրաժեշտ համարեցին «սրտցաւ» դիտորդի դեր ստանձնել ինչո՞ւ յանկարծ ճակատը պարպուեցաւ: Ինչո՞ւ Առանցքի ուժերը բացէ ի բաց թոյլ տուին, որ «դանակը հասնի ոսկորին»: Այսինքն՝ հայո՛ւ ոսկորին: Թոյլ



տուին, որ ցեղասպանական ճակատը (որուն այսուհետեւ մաս կը կազմէ նաեւ Իսրայէլ) ապօրինի դինատեսակներով անխնայ բնաջինջ ընէ Արցախի կենսատարածութիւնը՝ Արցախի ռազմավարական գոտին անբնակելի դարձնելու յստակ կանխամտածումով: Եւ ԳՈՐԾՆԱԿԱՆՕՐԷՆ ԼՈՒԾԱՐՔԻ ԵՆԹԱՐԿԷ ԱՅՆ ԻՍՎ ԹԱՆԿԱԳԻՆ ԴԻՐՔԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐՋԻՆ ՀԱՇՈՒՈՎ ԱՌԱՆՅՔԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ ԷՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՅՍ ԶԳԱՅՈՒՆ ԿԷՏԻՆ ՎՐԱՅ: Ինչո՞ւ Ռուսաստան եւ Իրան բացայայտօրէն հնարաւոր դարձուցին, որ թշնամին հասնէր Սիւնիքի դռներուն:

Մեր ուշադրութենէն պէտք է վրիպի այն փաստը, որ Ալիեւ եւ Էրտողան լծուած էին իրենց չարաշուք գործին այն հաստատ համոզումով, որ Ռուսաստան եւ Իրան պիտի չմիջամտէին ոճրային այս գործողութեան... Համոզուած էին, որ Ռուսաստան եւ Իրան պիտի թողնէին իրենց ձեռքերը ազատ... Համոզուած էին, որ Առանցքի տէրերը աչք պիտի գոցէին 21-րդ դարու այս նախճիրին վրայ: Այս է մերկ ճշմարտութիւնը, զոր պէտք է քաշուիլ բարձրաձայնել: Ընդհակառակն պէտք է փութալ համաշխարհային հանրութեան տանելու այս այրող հարցադրութիւնը:

Ազգային այս աղէտէն ետք, մեր պարտաւորութիւնն է հասկնալ, թէ ի՞նչ պատահեցաւ մեզի եւ թէ ի՞նչ կրնայ պատահիլ տակաւին: Իսկ հետեւա՞նքը Առանցքի երկու պետութիւններու այս չէզոքութեան: Արցախի եւ Հայաստանի վրայ այսօր իրողապէս կանգնած է Թուրքիա-Ազրպէյճանական (եւ իրենց ետին՝ Իսրայէլեան) գերոյժի ստուերը՝ ինքնաբերաբար վտանգելով ոչ միայն հայ անկախ պետականութեան եւ ժողովուրդի գոյութիւնը, այլեւ Ռուսաստանի եւ Իրանի անմիջական եւ հեռահաս շահերը:

Անկախ այն բանէն, թէ այս պահուն ո՞ւր կը գտնուին ազրպէյճանական ուժերը ռազմագետնի վրայ, մէկ բան յստակ է եւ անուրանալի: Հիմա արդէն կը գտնուինք թրքական կողմի չափազանցուած յաւակնութիւններուն դիմաց: Անտանելի է լսել Ալիեւի, Էրտողանի, Չաւուշուղլուի փրած խօսքերը Եռակողմանի Համաձայնագրին «բխող» իրենց ակնկալութիւններուն մասին: Ալիեւ «չ'ուզե՛ր» Հայաստանի մէջ տեսնել ազգայնական կառավարութիւն մը: Չ'ուզե՛ր ա՛յս

Այս էջը կը հովանաւորեն Մանուէլ, Թամսն, Գէորգ, Պուրբն եւ Պայպիկ Քօսէյան





Գերաշնորհ Տ. Բաբգեն Արք. Չարեան  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կրօնական Ժողովու ու Ազգային Վարչութիւնը  
եւ Թեմի բոլոր եկեղեցիները

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի  
Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Նշան Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Պօղոս Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցի  
Ս. Ստեփանոս Հայց. Առաքելական Եկեղեցի

Կը շնորհաւորեն Գանատահայութիւնը, մաղթելով,  
որ յառաջիկայ 2021 տարին ըլլայ խաղաղութեան,  
ողջամտութեան եւ իմաստութեան տարի:

Թող Ամանորը Հայ ժողովուրդին համար բանայ  
լուսաւոր նոր ճամբայ մը, յոյսով եւ հաւատքով քալելու:

եւ կ'ուզէ ա՛յն: Յանկարծ Ազրպէյճանն ու Թուրքիան են, որ կառավարութիւն պիտի թելադրեն Հայաստանի ժողովուրդին: Իսկ Ռուսաստանը: Իսկ Փոլիթընը: Իսկ Իրանը: Յամենայն դէպս որքան ալ ընդվզեցուցիչ եւ անհեթեթ ըլլան այս բոլորը, պէտք է անպայման եւ առարկայականօրէն հասկնալ, թէ ինչպէ՞ս հիւսուած է այս սարդոտային մեր շուրջ, որպէսզի հասկնանք էութիւնը այն պարտութեան, որ պարտադրուեցաւ Հայոց բանակին եւ որուն հետեւանքները ստիպուած ենք ազգովին դիմագրաւելու բացուող իւրաքանչիւր օրուան հետ:

Կասկած պէտք չէ ունենալ, որ Առանցքի երկու հզօր միաւորներու վերոյիշեալ «խենթութեան» ետին «մեթոտ» մը կար իր շատ ուրոյն տրամաբանութեամբ: Թուրքիոյ եւ Ազրպէյճանի նկրտումները յստակ էին առաջին իսկ օրէն: Իրենք գործեցին եւ կը գործեն ծաւալապաշտ իրենց քաղաքականութեան հեռանկարներով: Եւ առաջին հերթին՝ հայկական պատուարը ջարդելու առաջադրութեամբ: Եւ բնականաբար թուրքեւազրպէյճանական այս ծաւալապաշտութիւնը (ուղղուած՝ ոչ միայն Կովկասի, այլեւ ամբողջ Կասպեան Տարածաշրջանին) հասկնալ կը թիրախաւորէր ռուսական շահերը: Ան կը միտէր շրջափակելու Ռուսաստանը Կովկասէն մինչեւ Կեդրոնական Ասիա տիրելով Ռուսաստանի շարք մը կենսական ճանապարհներուն: Հետեւաբար հարցո՞ւմ է ինչո՞ւ Մոսկուա պիտի նախընտրէր մնալ չէզոք եւ լոկ դիտողի դերին մէջ: Այս հարցումին պատասխանը փորձած եմ մասամբ տալ իմ Հոկտեմբեր 25 թուակիր յօդուածիս մէջ («Հիւսիս-Հարաւ Առանցքը Անդամալուծուած») մատնանշելով կողմերու անմիջական շահերը միայն: Բայց պէտք է նաեւ բանալ ծալքերը Ռուսաստանի հեռահաս շահերուն, որոնցմով գրեթէ միշտ առաջնորդուած է Մոսկուան յատկապէս իր հին կայսերական տարածքներէն ներս:

Այս կէտին վրայ, հարց տանք, թէ ի՞նչ բան է Կասպեան Տարածաշրջանը: Աշխարհաքաղաքական այս եզրոյթը կեանքի կոչուեցաւ Խորհրդային Միութեան փլուզման ժամանակաշրջանին: Ան ստեղծուեցաւ ԱՄՆ-ի ռազմագէտներուն կողմէ նպատակ ունենալով յենարան ձեւաւորել ԱՄՆ-ի քաղաքականութեան համար պատմութեան բեմէն արագօրէն չքացող Խորհրդային Միութեան տարածքներէն ներս: Ըստ Արեւմուտքի ռազմագէտներուն, ան պիտի ընդգրկէր Կեդրոնական Ասիոյ նախկին խորհրդային թրքացեղ եւ իսլամակրօն հանրապետութիւնները, Անդրկովկասը եւ Թուրքիան՝ իր սկզբնական ձեւին մէջ, Կասպեան Տարածաշրջանը իր մէջ կ'առնէր նաեւ Հայաստանը, բայց շուտով ան դուրս ձգուեցաւ այս խմբաւորումէն: Հայաստանը նկատուելի սկսաւ ռուսական ազդեցութեան պատկանող հող եւ հեռուէ հեռու միայն քաղաքականօրէն շահեկան եւ յուսալի՝ Արեւմուտքին համար: Բոլոր միւսներուն վրայ կը տարածուէր Արեւմուտքի եւ յատկապէս ԱՄՆ-ի հովանաւորութեան ենթադրեալ ծածկոյթը: Իսկ այդ ծածկոյթը ազդեցութեան գօտիի վերածելու համար Արեւմուտքը պէտք ունէր վստահելի գործընկերոջ մը եւ այդ մէկը (այդ օրերու մտայնութեամբ) միայն Թուրքիան կրնար ըլլալ: Յանկարծ Թուրքիոյ փայփայած համաթուրանական դադափարին համար կը բացուէր Արեւմուտքի շահերէն իսկ բխող հսկայ մէկ գործադաշտ: Այս ձեւով, Թուրքիոյ կը վստահուէր երկու տարածաշրջան: Միջին Արեւելքը՝ ուր Թուրքիա պիտի գործէր որպէս իսլամութեան առաջնորդ: Եւ Կասպեան Տարածաշրջանը՝ ուր Թուրքիոյ համաթրքական հասոցութիւնները պիտի օգնէին Արեւմուտքին իր ոտքը ամրացնելու Ռուսաստանի կենսական տարածութիւններէն ներս:

Այս քաղաքականութեան դարբիններէն էին նաեւ Իսրայէլի ռազմագէտները: Իսրայէլ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի մէջ կը տեսնէր բնական դաշնակիցներ մէկ կողմէ՝ արաբական երկիրները հակակշռելու եւ միւս կողմէ՝ իրանեան վտանգին դէմ Իսրայէլին պաշտպանութիւն հայթայթելու ակնկալութեամբ: Իսրայէլ տառացիօրէն հաւատարիմ մնաց իր այս ռազմավարութեան նոյնիսկ երբ պարագայաբար կը բախէր Էրտողանի թշնամական ելոյթներուն:

Եւ սակայն Կասպեան Տարածաշրջան իմացութիւնը շուտով պիտի բախէր իրականութեան այլ եզրերուն: Բնական է, որ Ռուսաստան ձեռնածալ պիտի չհասէր ի տես այս միջազգային երթուղարձին: Հակառակ իրենց անջատողական հետորաբանութեան՝ խորունկ կապեր տակաւին կը կապէին Կեդրոնական Ասիոյ թրքացեղ այս պետութիւնները Մոսկուայի: Մոսկուա գիտէր, թէ նոյն մենաշնորհային համակարգն էր ամէնուրեք, որ շահակցական բարդ զօդուղիներով կ'իշխէր նախկին խորհրդային տարածքներէն ներս: Եւ որուն ուժին առջեւ կը նսեմանային բոլոր միւս քաղաքական շահազորդիչները (incentives): Շուտով նաեւ պիտի պարզուէր, որ նորանկախ հանրապետութիւնները ամենեւին պէտք չունէին Թուրքիոյ միջնորդութեան Արեւմուտքի հետ յարաբերութիւններ մշակելու համար: Հակառակ այս բոլորին, սակայն, Թուրքիա անկախաբար շարունակեց հետապնդել համաթրքական իր քաղաքականութիւնը իր յոյսը կապելով նորահաս սերունդներուն եւ իր լուս սպառնալիքը տարածելով ոչ միայն Ռուսաստանի ազդեցութեան ծիրէն ներս, այլեւ Ռուսական Դաշնութեան սահմաններէն՝ գործածելով իր քարոզչական բոլոր յայտնի ու անյայտ զէնքերը:

Փոլիթիկ ժամանակը կը յատկանշուի նաեւ այն իրողութեամբ, որ Ռուսաստանը, որպէս գերտէրութիւն, վերստին կը մտնէ միջազգային քաղաքականութեան ասպարէզէն ներս աշխարհակարգի երկբեւեռ դրուածքը վերականգնելու ճիգով: Եւ առաջին հերթին՝ Ռուսաստանի ազդեցութեան գօտին վերածեւաւորելու յաւակնութեամբ: Այս տարերային հոլովոյթով է, որ Կասպեան տարածաշրջանը շատ արագօրէն կը դադարի Արեւմտեան հանգիստ խաղափայր մը ըլլալէ եւ կը վերածուի ռուսեւարեւմտեան անհանգիստ մրցադաշտի մը: Եւ այս խուլ առճակատման բովին մէջ է, որ հետզհետէ մարմին կ'առնէ Հիւսիս-Հարաւ Առանցքը, որուն անտեսանելի գիծը (Իրանի վրայով) կը հասնի մինչեւ Սուրիա եւ Միջերկրական: Եւ այս բարդ գործընթացի տարերային (dynamics) մէջ անխուսափելիօրէն կ'ընդգրկուի նաեւ Արցախի հիմնահարցը: Այս վերջինի միջազգայնացումը տեղի կ'ունենայ ռուսեւարեւմտեան առճակատման նորմերով եւ հայ անկախ պետականութեան լինելիութեան քարքարոտ հողին վրայ:

Իմ կարծիքով, Նոյեմբեր 9-ի եռակողմանի Համաձայնագիրը զուտ ռուսական փաստաթուղթ մըն է: Ան յղացուած է Փոլիթիկ կողմէ միաժամանակ քանի մը կարեւոր ռուսական իրագործումներ ճարտարապետելու յստակ մտասեւեռումով:

Փանթուրքիզմի մեծ սպառնալիքին որպէս հակակշիռ, Մոսկուա որոշած կը թուի ըլլալ իր թաթը ամրացնել Ազրպէյճանի մէջ: Ազրպէյճանական քարիւղի եկամուտները ռազմական գնումներու միջոցով Ռուսաստան հոսեցնելու Փոլիթիկ-Ալիեւ գործարքը մէկ երեսն է միայն Ազրպէյճանէն ներս խարսխուելու ռուսական քաղաքականութեան՝ Մոսկուա որոշած կը թուի ըլլալ Ազրպէյճանը չզիջիլ Թուրքիոյ եւ Իսրայէլի: Ի հարկին նոյնիսկ զայն երեւութապէս «բաժնել» ու՛ր այս վերջիններուն եւ ԱՄՆ-ի հետ, բայց միշտ իրեն վերա-

*Այս էջը կը հովանաւորեն Կրայք եւ Ռուրի Զախարեան*



# GRANITE

**P R E S T I G E M B**

COMPTOIRS DE CUISINES ET SALLES DE BAIN  
KITCHEN & BATHROOM COUNTERS

Spécialiste Comptoirs  
*Counter Specialists*  
Granite ~ Quartz  
Marble ~ Marbre

**ESTIMATION  
GRATUITE  
FREE ESTIMATE**



Service  
*Clé en main*  
*We do it all!*



Prise de mesures  
Fabrication  
Livraison et Installation rapide  
*Measurements taken*  
*Manufacturing*  
*Delivery and Quick Installation*

**GRATUIT  
FREE\***

Évier de cuisine / Kitchen Sink

Value of **\$350**  
Commande min. / Min. order \$2500.00



**Achetez au Prix du Fabricant!**  
**Buy direct from the Manufacturer!**

**514.331.8337**

[www.graniteprestige.com](http://www.graniteprestige.com)

7111 ROUTE TRANSCANADIENNE  
VILLE ST-LAURENT, QC H4T 1A2

VOISIN DE RONA et GUZZO • NEXT TO RONA HARDWARE & GUZZO

Մեծ հաճույքով կը սպասարկենք Մեծն Մոնթրիալի Հայ գաղութը

պահելով առիժի բաժինը: Եւ միշտ թիրախաւորուած պահելով Ազգայնականի եւ Ալիեւի աքիլլէսեան կրունկները:

Այս մէկը կարենալ իրագործելու համար, Մոսկուա անհրաժեշտ համարած պէտք է ըլլայ «կաշառել» Ալիեւը իր ներկայ յաղթանակով (դժբախտաբար մեր արեան հաշւո՛յն) եւ միաժամանակ ձգտելով իր ուսկանին մէջ բռնելու թուրքիւն: Պարզ է, որ ուժաթափ Հայաստանը եւ իր (Փոլիթի) նախագծով «յաղթանակած» Ազգայնականը իր թաթին մէջ հաւաքած գերպետութիւնը այնուհետեւ ի վիճակի է պատանդ վերցնելու Կովկասեան ամբողջ տարածաշրջանը եւ «ըստ պատկերի իւրում» կարգաւորելու Հարաւային Կովկասի քաղաքական քարտէզը մէկդի հրելով թուրքիւն եւ յաջողապէս չէզոքացնելով ԵԱՀԿ-ի Մինսքի խումբի Համաձայնագրահանութեան իր գործընկերները: Ի դէպ արեւմտամէտ քաղաքականութեան ենթադրեալ բեւեռ հանդիսացող Վրաստանի մասին առհասարակ չ'արժեք խօսիլ, քանի որ ան ինքնաբերաբար եւ կեանքի ուժով կ'ընդգրկուի վերոյիշեալ ռուսական գործընթացին մէջ:

Նոյեմբեր 9-ի Եռակողմանի Համաձայնագիրը իրաւական հզօր հող կը հայթայթէ Մոսկուայի ռազմական մեծ ուժ տեղադրելու Հայաստանի եւ Արցախի մէջ առանց պարպելու Գիւմրիի իր ռազմախարխալը: Ծիշտ է, որ երեւութապէս փուկ եկած է հայկական պատուարը Ռուսաստանի անուղղակի թոյլտուութեամբ: Եւ սակայն զայն փոխարինելու եկած է ռուսական ռազմոյժը «միջանցքներուն հսկելու» պիտակին տակ: Այսօր Ալիեւ կը թուի վայելել իր «ռուսանուէր» յաղթանակը: Եւ սակայն ան արդէն կ'ըզգայ, որ այս յաղթանակը իրմէ առաջ ուրիշ տէր մը ունի... Եւ որ ան ենթակայ է համաձայնագրի մեծ գործընկերոջ հաստատած եւ հաստատելիք խաղաղանոններուն:

Այս կէտին վրայ, հարցականի տակ է նաեւ, թէ ի վերջոյ ի՞նչ շահած է թուրքիւն պատերազմի գործարքէն: Անքարայի համաթրքական ծրագիրը ի՞նչ չափով կրցած է նոր գետին նուաճել: Հակառակ իր հրապարակային հռետորաբանութեան, թուրքիա ներկայիս յստակ պատճառներ ունի արդէն իսկ խաբուած զգալու: Յառաջիկայ օրերը ցոյց պիտի տան, թէ Փոլիթիեան նախաձեռնութիւնը դէպի ո՞ւր կը դիմէ Կովկասի բեմին վրայ:

Թուրքեւագրապէսական համաթրքական սպառնալիքը անշուշտ կը շարունակէ իրական վտանգ մը ըլլալ Ռուսաստանի համար: Վտանգ մը՝ որուն դէմ ուղիղ առճակատման դիմելու անպատեհութիւնները շատ մեծ են Ռուսաստանի համար: Փոլիթի կը թուի գիտակցիլ այս իրողութեան եւ գտած ըլլալ կը թուի ոսկեայ այլընտրանքը... ՄՈՍԿՈՒԱ ԱՅՍՕՐ ԿԸ ՆԱԽԸՆՏՐԷ ՆԵՐՍԷՆ ԳՐԱԻԵԼ ՓԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ: ԶԱՅՆ ԱՌՆԵԼ ԻՐ ԴՐՕՇԻՆ ՏԱԿ: ԶԱՅՆ «ՌՈՒՍԱՅՆԵԼ» ԵՒ ԶԱՅՆ ԱՆՄԱՏՁԵԼԻ ԸՆԾԱՅԵԼ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԱԶՐՊԷՅՅՈՒՆԻ: ԶԱՅՆ ՏԱԿԱԻ ՀԱԼԵՅՆԵԼ ՈՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԻՐ ՀՍԿԱՅ ԶՐԱԶԱՆ ԳՈՒԱԾԻՆ ՄԷՋ:

Ապագան ցոյց պիտի տայ, թէ որքա՞ն արդիւնաւէտ կրնայ ըլլալ ռուսական այս քաղաքականութիւնը: Պէտք է գերազանհատել էրտողանի եւ իր համախոհներու օսմանական ժամանակավրէպ հռետորաբանութիւնը: Պէտք է ստորագնահատել Փոլիթի կարողութիւնը իր կայսերական տիրոջին յաջողապէս տիրութիւն ընելու: Բայց մանաւանդ մեծ սխալ մըն է Մոսկուայի կողմէ «ողոքում»ի եւ «սիրաշահում»ի մարտավարութիւններով սնուցանել թուրքեւագրապէս-

ճանական Ֆաշիզմի հրէշը: Զայն պէտք է խեղդել իր բոյնին մէջ: Եւ Մոսկուա ի վիճակի է այդ բանը իրագործելու:

Փոլիթի ներկայ ռազմավարութիւնը խաղաղանոն կը հաստատէ նաեւ Իրանի համար: Թրքական եւ խորայնէկան գոյգ սպառնալիքներուն դիմաց՝ Իրան լուրջ պատճառ ունի վերադառնալու Հիւսիս-Հարաւ Առանցքի ապահովութեան եւ շատ աւելի ներգործօն մասնակցութեամբ: Առաւել՝ պայմանները հրամայական կը դարձնեն ներկայիս, որ Իրան մօտէն հետեւի հայ-ռուսական յարաբերութիւններու ընթացքին: Իրանի շահը (no pun intended) այսօր շատ սերտօրէն կապուած է Հայաստանի պետականութեան լինելիութեան հրամայականներուն հետ, որոնք իրենց կարգին՝ կապուած են Հայաստան-Ռուսաստան խորքային յարաբերութիւններու որակին: Իրանի համար կենսական նշանակութիւն ունի այսօր Ռուսաստանի ներկայութեան ամրակայումը Արաքսի այս ափամերձ գօտիին մէջ, որպէսզի Իրան կարենայ տէր կանգնիլ իր ներքին միութեան եւ Իսլամական Հանրապետութեան հողային ամբողջականութեան:

Եւ վերջապէս կարեւոր է շեշտել հետեւեալը: Ասոնք կ'ընտրուի բանակցութիւններու ժամանակներն են Հայաստանի համար: Կ'ընտրուի եւ ճակատագրակա՛ն: Այս բանակցութիւնները կը պահանջեն նոր եւ հոգեպէս անկաշկանդ ղեկավարութիւն: Հայաստան պէտք է կարողանայ ազատ մտքով հարգակցիլ իր ռազմավարական գործընկերոջ հետ եւ բարձրորակ ներդրում բերել այդ խօսակցութեան: Եռակողմանի Համաձայնագիրը մեծ թերութիւններ ունի իր ներկայ կոշտ գիծերուն մէջ: ԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ ԱԼԻԵՎԻՆ: ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԱՅՍ ԴՐՈՒԱԾՔԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔ ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻՆ: ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԸՆԴՈՒՆԻԼ ԻՐ ՄՏՔԻՆ ՎՐԱՅ ԾԱՆՐԱՅՈՂ ԵՒ ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ՎԱՍՏԱԿԸ ԱՆՊԱՏՈՒՈՂ ՇԻՆԾՈՒ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՅՍ ԹՈՒՂԹԸ: ՆԱԽԱԳԱՀ ՓՈՒԹԻՆ ՊԵՏՔ ՈՒՆԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆԿԵՂԾ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՆ: ՀԵՏԵԻԱԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ ՆՈՐ ՎԱՐՁԱՊԵՏԻ ԵՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ: ՊԱՅՄԱՆ Է, ՈՐ ԱՅՍ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ՎԵՐՍՏԻՆ ԲԵՐՈՒԻ ՍԵՂԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՆԵՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:

Պայման է, որ Եռակողմանի Համաձայնագիրը, որուն վրայ կայ Ռուսական Դաշնութեան Նախագահին ստորագրութիւնը, դադրի ազգային ամօթ մը ըլլալէ հայ ժողովուրդի աչքին: Պայման է, որ Արցախի ու Հայաստանի հողային ամբողջականութեան նախանձախնդիր արմատական սրբազրութիւններով՝ ան վերածուի իսկական համաձայնագրի մը ցողացնելով բոլոր կողմերու ողջամիտ եզրակացութիւնը: Ազգային Համաձայնութեան Կառավարութիւնը գլխաւորող ՀՀ Վարչապետն ու Նախագահ Փոլիթի պէտք է կարողանան իրագործել այս կարեւոր եւ անշրջանցելի առաջադրութիւնը: Նախագահ Փոլիթի միակն է այսօր, որ կրնայ այս գործընթացը դուրս հանել այս կործանարար ջրապտոյտէն: Եւ տարածաշրջանը տանի՛լ դէպի իսկական խաղաղութիւն: Իրագործո՛ւմ՝ որ զինք արժանի կ'ընծայէ Նոպէլեան խաղաղութեան Մրցանակին:

Կարօ Արմենեան

*Այս ֆոր կը հովանաւորեն Յակոբ եւ Անահիթ Այր Ռաւապուրտիան*



Հայ Օգնության Միությունը իր **110** -  
ամեայ առաքելության տեր՝ յոյսի եւ լոյսի  
բաժին մը կը բերէ մեր հայրենի ոստաններուն  
հայության: Բարեսիրական մեր բոլոր  
ծրագիրներով, մի՛շտ հայության կողքին,  
հաստատական քայլերով պիտի շարունակենք  
մեր երթը յանուն մեր ազգի բարօրության:



[www.ars1910.org](http://www.ars1910.org)



# Հայաստանի իշխանություններու զիջողական քաղաքականությունը սպառնալիք է Հայաստանի ու Արցախի ազգային անվտանգությանը Հարցազրույց Հայ Յեղափոխական Դաշնակցության Գանատայի Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Մհեր Գարսագաշեանին հետ

Հորիզոն.- 2020 թուականը դժուար տարի մը եղաւ հայ ժողովուրդին համար: Գորոնաժառի, Լիբանանի տնտեսական տագնապ եւ սպառնալիքները պատերազմ, իսկ վերջերս, արցախեան պատերազմն ու ՀՀ Կառավարութեան զիջողական քաղաքականութիւնը: Այս իմաստով, կարելի՞ է համառօտ ներկայացնել ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի տարած աշխատանքները: Ի՞նչ մարտահրաւերներ ու ձեռքբերումներ ունեցա՞ւ անցնող տարուան ընթացքին:

Մ.Գ.- Կեդրոնական Կոմիտեի մեր կազմը գործի լծուեցաւ 2019-ի Յուլիսին, յետ ՀՅԴ Շրջանային մեր ժողովի գումարման: Ամառնային շրջանը յատկացուցինք ծրագրաւորման ու ճանապարհային քարտեզի մշակման գործին՝ մեկնելով Շրջանային ժողովէն բխած բանաձեւերէն ու առաջադրանքներէն, ինչպէս նաեւ շրջանի կազմակերպական կարիքներէն: Այս հիման վրայ, օրինակ, առաջնահերթաբար՝ յառաջացուցինք Արցախի օժանդակութեան յանձնախումբը, իսկ Լոռի-Ջաւախքի արդէն իսկ գործող յանձնախումբը համալրեցինք նոր աւելումով: Երկու յանձնախումբերու պարագային ալ՝ մշակուեցան աշխատանքային ծրագրեր՝ շուտով ի գործ դրուելու: Դեկտեմբերի սկիզբը, Դաշնակցութեան օրուան առթիւ, իբրեւ պատգամաբեր Հայաստանէն հրաւիրեցինք ՀՅԴ Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Ընկ. Իշխան Սաղաթէլեանը, որուն այցը ունէր նաեւ այլ նպատակ մը՝ ջրել Հայաստանի մէջ շրջանառուող այն սաղորուած մօտեցումներն ու ըմբռնումները, որոնք կը փորձէին անջրպետ մը տեսնել Հայաստանի ու սփիւռքի մեր կառույցներուն միջեւ: Առաւել եւս, ընկ. Սաղաթէլեանի այցը նաեւ առիթ մը եղաւ, որպէսզի քաղաքական բարձրաստիճան հանդիպումներ կազմակերպենք քաղաքապետական, նահանգային եւ դաշնակցային մակարդակներու վրայ:

Սակայն եւ այնպէս, այդ օրերուն սկիզբը առաւ Գորոնաժառի համավարակը, որ քիչ անց հասաւ Գանատա եւ նոր իրականութեան մը առջեւ դրաւ բոլորս: Պէտք էր ամէն ինչ վերանայիլ, վերածրագրել եւ դնել նոր հունի մէջ՝ նկատի ունենալով նոր պայմաններն ու հարկադրանքները: Այդ բոլորը ընելն ու գործի անցնիլը երկար ժամանակ չխլաց մեզմէ: Ի պատիւ մեր բոլոր կոմիտէներուն եւ ուղեկից կազմակերպութիւններուն՝ եղանք ժողովուրդին հետ, աշխատեցանք ժողովուրդին համար: Մեր բոլոր կոմիտէներն ալ անմիջապէս շտապ օգնութեան յանձնախումբեր կազմեցին՝ օժանդակութեան կարիք ունեցող մեր հայորդիներուն հասնելու համար: Հեռաձայնային թէ՛ գիծեր հաստատուեցան եւ բոլոր քաղաքներուն մէջ ուր կազմակերպական ներկայութիւն էինք՝ մեր կարելին ըրինք հասնելու բոլոր մեզի դիմող հայորդիներուն: Առաւել եւս՝ մեր կազմակերպչական-յարաբերական հարթակը փոխադրեցինք առցանց ոլորտ, վերաշխուժացուցինք մեր ժողովական կեանքը՝ օգտուելով արհեստագիտութեան ընձեռած արդիական միջոցներէն:

Այս աշխատանքներուն զուգահեռ, համավարակի այս



արտակարգ ու անդամալուծող իրավիճակին մէջ, դիմադրաւեցինք նոր մարտահրաւերներ՝ համահայկական մակարդակով: Լիբանանի տնտեսական ու գորոնաժառի տագնապ, սուրիահայրութեան տնտեսական եւ համաճարակի տագնապ, ու քիչ անց՝ Օգոստոս 4-ին Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի նաւահանգիստին մէջ ահաւոր տարողութեամբ պայթում: Մեր յառաջացուցած Լիբանանահայրութեան Օժանդակութեան Գանատայի Մարմինը, մեր ուղեկից միութիւններէն եւ հաստատութիւններէն բաղկացած ներկայացուցչական կազմով, երկու հանգանակային արշաւ ու թելեթոն կազմակերպեց եւ միաւորուած ճիգերով՝ իր կարելին ըրաւ համագործակցային մասնակցութեամբ՝ անգամ մը եւս հասնելու մեր քոյրերուն եւ եղբայրներուն:

Արցախեան պատերազմի պայթումը՝ մեզ մղեց ամբողջական գորաշարժի ենթարկելու մեր կառույցը: Մեր ուժերը գերլարեցինք եւ բոլոր ճակատներու վրայ անցանք գործի: Պատերազմի սկիզբի օրերէն իսկ, չափակչուելով կացութեան օրհասական վիճակը, առաջնորդուեցանք գանատահայրութեան բոլոր ուժերը ի մի բերելու սկզբունքայնութեամբ: Ընդհանուր գորաշարժի այս թափին մէջ՝ նպատակաւորուած ու անխոնջ գործի անցան մեր Հայ Դատի յանձնախումբերը, կոմիտէները, երիտասարդական, ուսանողական եւ ուղեկից միութիւնները, ամբողջ գաղութը, մեծով ու փոքրով: Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը, առաւել՝ մեր նահանգային յանձնախումբերը, 44 օր անդադար Գանատայի պետական տարբեր օղակներու մօտ բարձրացուցին հատու՛ բողոքի ձայն, յստակ պահանջներ դրին սեղանի վրայ ու իրազեկ պահեցին զանոնք գետնի վրայ տիրող իրադարձութիւններէն: Միւս կողմէ, պատերազմի յաջորդող իսկ ժամերուն, Կեդրոնական Կոմիտեի Արցախի օժանդակութեան

*Այս էջը կը հովանաւորէ Պաճօթի Զագնաւաճեան*





**COLLISION CENTER - CENTRE DE COLLISION**

**Etablissement Tavoukdjian**

6055 Pontgravé, Montreal, Quebec H4K-2E7

Tel : (514) 274-4133

Fax : (514) 904-2313

Email : [info@autoralph.com](mailto:info@autoralph.com)

յանձնախուժմբը անմիջապէս սկսաւ իր հանգանակային արշաւին՝ հասնելու համար Արցախի կարիքներուն: Արժէ կարեւորութեամբ շեշտել Հայ Դատի մեր շրջանային յանձնախուժմբի եւ անոր Օթթաուայի գրասենեակին տարած յարաճուն ճիգերուն իբրեւ արդիւնք՝ Գանատայի դաշնակցային խորհրդարանի անդամներ, Գանատայի խորհրդարանի Գանատա-Արցախ եւ Գանատա-Հայաստան խորհրդարանական խմբակցութիւնները, ինչպէս նաեւ խորհրդարանական կուսակցութիւնները դատապարտեցին ատրպէյճանական յարձակողապաշտ քաղաքականութիւնը: Հայ Դատի յանձնախուժմբը մնալուն կապի մէջ էր պետական գերատեսչութիւններու եւ նախարարութիւններու հետ՝ առաջ մղելու Արցախի ինքնորոշման իրաւունքի եւ մեր ժողովուրդին սպառնացող գոյութեան վտանգին հարցերը՝ ի դիմաց թուրք-ազերիական նախադրածակ ներխուժման: Հայ Դատի շրջանային եւ նահանգային յանձնախուժմբերու նախաձեռնութեամբ սկիզբ առին շատ մը նամակարչաւներ, որոնցմէ կ'առանձնացնեմ մէկ օրինակ՝ Գանատայի արտգործ նախարար Ֆրանսուա Ֆիլիպի Շամփայինի ուղղուած ստորագրահաւաք-նամակարչաւը: Այս արշաւին ու անոր նախորդած Հայ Դատի քուլիսային մեծ ճնշումին իբրեւ արդիւնք՝ ան սառեցուց գանատական L3Harris Wescam ընկերութեան տեսախցիկներու վաճառքը Թուրքիոյ՝ որոնք կը գործածուէին անոր արտադրած անօդաչու թռչող սարքերուն վրայ: Արցախի ինքնորոշման իրաւունքի հիմամբ՝ ծերակուտական Լէօ Հուսարոսի հետ մօտէն աշխատեցանք՝ որ ճանաչման բանաձեւ ներկայացուի Գանատայի ծերակուտին ծէջ: Նոյնանման աշխատանքներ ծաւալուեցան Քեպէզի եւ Օնթարիոյ խորհրդարաններուն մէջ՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի գծով դրական կեցուածքներով: Տեղւոյն մեր կոմիտէներու, Հայ Դատի յանձնախուժմբերու եւ համայնքներու տենդոտ աշխատանքի արգասիքն էր այս: Օնթարիոյ պարագային՝ որոշիչ դեր ունեցաւ նաեւ Օնթարիոյ խորհրդարանի անդամ՝ Արիս Պապիկեանը: Այս ծիրին մէջ, հարկ է ընդգծել նաեւ որ Լաւալի քաղաքապետարանը յատուկ բանաձեւով ճանչցաւ Արցախի անկախ հանրապետութիւնը: Հոս եւս, տեղւոյ կոմիտէին ու Հայ Դատի յանձնախուժմբին կողքին՝ մեծ եղաւ դերը Լաւալի քաղաքապետական խորհուրդի անդամ՝ Արամ Էլակոզի:

ՀՅԴ Գանատայ երիտասարական եւ ուսանողական թեւերը, ձեռք ձեռքի տուած գանատահայ երիտասարդութեան հետ, ամբողջ 44 օր բողոքի հանրահաւաքներով ու ցոյցերով իրենց գորակցութիւնը յայտնեցին Հայաստանին, Արցախին ու Հայ գինուորին: Այս իմաստով՝ տեղական լրատուամիջոցներէ ու հանրային կարծիքէն՝ ունեցանք նկատառելի արձագանգներ: Ամփոփելով, թէ՛ քաղաքական, թէ՛ ցուցական եւ թէ՛ նիւթաբարոյական օժանդակութեան առումներով՝ գանատահայութիւնը շարժեցաւ իբրեւ մէկ-միասնակամ բռնեցք, սակայն տեղի ունեցաւ անսպասելին... Ստորագրուեցաւ Նոյեմբեր 9-ի տիրահաշակ եռակողմ համաձայնագիրը: Ան ուրիշ բան չէր եթէ ոչ՝ անձնատուութեան ամօթալի փաստաթուղթ մը, որու մշտական սպառնալիքի ու աղէտի ծանր ստուերը՝ տակաւին կախուած Հայաստանի ու Արցախի ազգային անվտանգութեան, գոյութեան՝ իսկ երաշխիքներուն վրայ:

Հորիզոն.- Արցախեան պատերազմն ու ՀՀ. կառավարութեան զիջողական քաղաքականութիւնը յուսախաբութեան ու դժգոհութեան ալիք մը բարձրացուց բոլորիս

մօտ, երբեմն նոյնիսկ խաբուած ըլլալու զգացումը արթնցաւ շատերու մօտ: Ինչ ձեւով պիտի շարունակենք մեր օժանդակութիւնները Հայրենիքին:

Մ.Գ.- Դժբախտաբար, այսօր այնպիսի իրողութեան մը առջեւ ենք, որ յուսախաբութեան, դժգոհութեան ու պարտութեան զգացումները ցնցած են իւրաքանչիւրիս հոգին: Բայց եւ այնպէս, Դաշնակցութիւնը »Յարատեւ կուրճի կուսակցութիւնն է, ինչպէս բնորոշած է մեր հիմնադիրներէն՝ Քրիստափոր Միքայէլեանը: Այդ յարատեւ պայքարը պիտի շարունակենք այս հանգրուանին եւս՝ վճռականօրէն՝ կանգնելով հայ ժողովուրդին, հայոց բանակին եւ գինուորներուն կողքին: Մենք պատրաստ ենք այս հեռուոր ամիսներէն, հայրենի մեր ժողովուրդին ամէն գնով սատար հանդիսանալ ու նեցուկ կանգնել հայրենիքին:

Յետ-պատերազմեան առումով շատ աշխատանքներ կան կատարուելիք, եւ մեր ողջ կարողականութեամբ եւ ներուժով՝ պիտի շարունակենք գործօն մէկ օղակը ըլլալ հայրենիքի համար մղուող փրկութեան յարատեւ պայքարին: Արցախի եւ Հայաստանի մեր քոյր ու եղբայրներուն թիկունքին կանգնած, ամէն ինչ պիտի ընենք մեղմացնելու համար անոնց կսկիծն ու կորուստները, յանուն մեր նահատակներուն: Մենք պատրաստ ենք ամէն ինչի, բայց եւ այնպէս, չենք հանդուրժեր Հայաստանի ներկայ իշխանութեան ապաշնորհ, ապագային ու պարտողական քաղաքականութիւնն ու ամէն գնով աթոռին կառչած մնալու բռնագրօսիկ ճիգերը: Պարտուած իշխանութիւն մը, որ իր կարճ կենսագրութիւնը նոյնիսկ պատերազմի ընթացքին անցուցած է ժողովուրդը խաբելով, բարոյական իրաւունքը չունի մնալու երկրի դեկին: Այս իմաստով կը գորակցինք Հայաստանի Գերագոյն Մարմնի մեր ընկերներուն ու եւ Հայրենիքի Փրկութեան Շարժման ազգային մտածելակերպ ունեցող իւրաքանչիւր հայրենակիցի կեցուածքին՝ կատարել անցնցում իշխանափոխութիւն, հաստատել ժամանակակար կառավարութիւն եւ կատարել արտահերթ ընտրութիւններ, որպէսզի ժողովուրդը ինք որոշէ թէ՛ ինչպէս պիտի դուրս գայ այս փակուղիէն, որ ցեղասպանութենէն ետք՝ մեր նորագոյն պատմութեան ամենացնցիչ հարուածն է:

Մենք տրամադրուած ենք երկարաշունչ պայքարի: Սա վերջին արարը չէ մեզի համար, այլ ամէն ինչ պիտի կատարենք յառաջ երթալու եւ նուազագոյն վնասով դուրս գալու պարտադրուած այս նուաստացուցիչ համաձայնագրէն: Որքան ալ որ ծանր է հարուածը, որքան ալ սրտաբեկող՝ մենք համահայկական ճիգերով պէտք է ամէն ինչ ընենք՝ համաձայնագրին մէջ բաց ձգուած Արցախի կարգավիճակի հարցի բարեք լուծման համար:

Հորիզոն.- Հայաստանը արդէն իսկ տնտեսական, ընկերային, հոգեբանական ու մարդկային ճգնաժամի եզրին է: Ի՞նչ ձեւով պիտի շարունակենք մեր օժանդակութիւնները Հայրենիքին:

Մ.Գ.- Ինչպէս ըսինք, պատերազմի առաջին իսկ օրէն, ՀՅԴ Գանատայի կեդրոնական կոմիտէն՝ Գանատայի տարածքին գործող իր բոլոր կառույցներով եւ ուղեկից միութիւններով, իր ողջ կարողականութեամբ եւ ներուժով լծուեցաւ Արցախի ի նպաստ համագանատական նուիրահաւաքին: Այս օրերուն եւս օժանդակութիւնները կը շարունակուին եւ պիտի շարունակուին զանազան մակարդակներու վրայ: ՀՕՄ-ին հետ համագործարար պիտի մասնակցինք երկու նախաձեռնու-

*Այս էջը կը հովանաւորեն Մեքորոս Եւ Օնփիկ Գահիֆ-Ճեան*





# Ghadir

## Meat & Restaurant

Մեր բարձր յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHADIR մտավաճառատունն ու ճաշարանը փոխադրուած է աւելի ընդարձակ եւ յարմարաւէր կեդրոն մը՝ Լորաւոյն եւ լաւագոյն ձեւով ծառայելու մեր յաճախորդներուն:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պօրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոթ, չի բօթթէ, լման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդներնը:



ՆՈՐ ՀԱՍՅԷ՝  
1848 Lawrence Avenue East  
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶՄՆՆ՝  
(416) 750-7404 կամ (416) 750-7400



**NEW! Fresh, fried and charcoal  
grilled fish - Dine in or Take out**





Թիւններու՝ «Թիկունք Կանգնի՛ր Արցախեան ընտանիքի մը» եւ «Ամանորի Նուէր» ծրագիրներուն, որոնք կը միտին օժանդակութիւն հասցնել նահատակներու, հաշմանդամ զինուորներու եւ տեղահանուածներու ընտանիքներուն ու երեխաներուն: Առաջին ծրագրին համար՝ արդէն կատարած ենք անմիջական 100,000 ամերիկեան տոլարի փոխանցում մը ՀՕՄ-ին: Ծրագիր ունինք աշխատանքային կամաւոր խումբեր ղրկել Հայաստան՝ կազմուած մեր Երիտասարդական եւ Ուսանողական միութիւններու անդամներէն, որոնք գետնի վրայ պիտի կատարեն օժանդակութեան աշխատանքները: Օժանդակութեան աշխատանքներու կողքին, պետական տարբեր օղակներու մէջ պիտի շարունակենք առաջ մղել արդէն իսկ սկսած՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի ճանաչման հարցը, հայ ռազմագերիներու վերադարձի եւ Թուրք-ազերիական պատերազմական ոճիրներու բացայայտման աշխատանքները, որոնք յոյժ կարեւոր են այս հանգրուանին, մանաւանդ կենսական հրատապութիւն ունեցող մեր գերիներու խնդիրը:

Հորիզոն.- Արցախ-Ատրպեյճան պատերազմի ընթացքին գոհ էիք Գանատայի բռնած քաղաքական-դիւա-նագիտական դիրքորոշումներէն, վերատեսուութեան կ'ենթարկէ՞իք կարգ մը յարաբերութիւններ պետական պաշտօնատար կարգ մը անձանց հետ: Ի՞նչ նոր մարտահրաւերներ կը դիմագրաւէ Հայ Դատի աշխատանքները այսօր եւ յառաջիկային:

Մ.Գ.- Ի հեճուելս Հայ Դատի յանձնարումներու բազմապատիկ ու բազմաբովանդակ ճիգերուն, բողոքի ցոյցերուն եւ գանատահայութեան հատուկ կեցուածքներուն, Գանատայի վարչապետի գրասենեակէն մինչեւ կառավարութեան յետին պաշտօնատարը որդեգրեցին մեզի ու անողնաշար քաղաքականութիւն մը: Հակառակ որ Գանատայի դաշնակցային խորհրդարանի, ու խորհրդարանական կարգ մը կուսակցութիւններու համայնքիս մօտիկ անդամներ դատապարտեցին ատրպեյճանական յարձակողապաշտ քաղաքականութիւնը, սակայն ընդհանուր առմամբ կառավարութեան դիրքորոշումը եղաւ խուսափողական: Կառավարութենէն հիմնականօրէն պահանջեցինք՝ պետական մակարդակով դատապարտել

Թուրք-ատրպեյճանական յարձակողապաշտ քաղաքականութիւնը, դատապարտել ճիշատիստ ահաբեկիչներու մասնակցութիւնը այս պատերազմին, ճանչնալ Արցախի ինքնորոշման իրաւունքն ու կասեցնել ռազմական սարքերու վաճառքը Թուրքիոյ: Զայն ծպտուն չէլաւ առաջին երեք կէտերու պարագային... Ունեցանք հատուկեփնտ շօշափելի արդիւնքներ՝ օրինակ վերեւ նշուած Wescam սարքերու վաճառքի սառեցումը կամ արտգործ նախարարի բերնով կոչը՝ որ Թուրքիան հեռու մնայ այս պատերազմէն: Մնացեալ բոլոր երեւոյթները եւ բարեկամութեան գեղեցիկ բանաձեւումները՝ թուեցան ձեւականութիւններ են պարզապէս:

Բացարձակապէս գոհ չենք Գանատայի բռնած քաղաքական-դիւանագիտական կրաւորական դիրքորոշումներէն: Իսկ վերջերս, Արտգործ նախարար Շամփայնի հանդիպումը ազերիական համայնքի ներկայացուցիչներուն հետ, հակառակ որ ան մեզի քանի մը առիթներով վստահեցուցած էր որ պիտի չառնէ նման քայլ, անվստահութեան լուրջ խնդիր ստեղծեց մեր մօտ:

Բնականաբար, Գանատայի ներկայ իշխանութեան հանդէպ այս անվստահութեան մթնոլորտը կլանած է նաեւ մեր գաղութը: Այս իմաստով, մենք մեր հաշուարկները կը կատարենք, եւ եթէ այսպէս շարունակուի՝ յառաջիկայ ընտրութեանց կը կարծեմ որ հայ համայնքը քուէարկութեան առումով՝ կողմնորոշուելու դժուարութիւն չունենար:

Եզրափակելով, կ'ուզեմ անգամ մը եւս հաւաստիացնել որ մեր աշխատանքները պիտի շարունակուին նորոգ սլացքով ու եռանդով՝ յանուն Արցախի, Հայաստանի ու մեր ժողովուրդին: ՀՅԴ Գանատայի կառույցը, իր ողջ կարողականութեամբ եւ ներուժով՝ պիտի շարունակէ գործօն մէկ օղակը ըլլալ մեր յարատեւ պայքարին:

Առիթը օգտագործելով՝ կ'ուզեմ Գանատայի Դաշնակցական ընտանիքի անունով՝ շնորհակտութիւն զանատահայութեան Ամանորն ու Սուրբ Ծնունդը, մաղթելով որ 2021 թուականին սկիզբ կ'առնէ համազգային մեր վերականգնումի, հայրենիքի փրկութեան եւ նոր նուաճումներու մեկնարկը:

Հարցազոյցը վարեց՝ Քրիստափոր Միքայէլեան

*Այս էջը կը հովանաւորեն Արմապէրա Վրայապրիմիթրիօս եւ Թամար Մուշախեան*





**York**  
Cemetery and  
Funeral Centre

PROVIDING CARING SERVICE  
TO FAMILIES SINCE 1948



- Full service funeral, reception, visitation and cemetery needs
- Hold both cemetery and funeral services at this location
- Bright and open areas for small or large services
- Experience with facilitating funerals at Armenian churches

## CALL TODAY

FOR A FREE CONSULTATION ON  
PRE-PLANNING YOUR FUNERAL  
AND CEMETERY ARRANGEMENTS.

**416-221-3404**

160 Beecroft Road | North York ON  
[www.mountpleasantgroup.com](http://www.mountpleasantgroup.com)





# «Անգամ բռնի մահմետականացումից յետոյ Համշէնը շարունակում է պահպանել ազգային նկարագրի բազմաթիւ տարրեր».

## Փրոֆ. Աշոտ Մելքոնեան



Տեսարան Եղնովիտ (Էլեվիթ)՝ այժմ Եայլաքոյ գիղ. Լուսանկարը՝ Լուսինէ Սահակեանի

Հայկական բարձրաւանդակում հազարամեակներ շարունակ ապրել ու արարել է հայ ազգը՝ լինելով տեղաբնիկն այդ տարածքում: Պատմական Հայաստանն իր 15 աշխարհներով, մնացել է հայի գենետիկ յիշողութեան մէջ: Եւ այդ յիշողութեան եւ պատմութեան անբաժան մասն է Հայոց Համշէն գաւառը՝ հարուստ անցեալով ու դժուարութիւններով լինելով: Հնագոյն սկզբնաղբիւրները վկայում են, որ Հայոց Համշէն գաւառը գտնուել է Խաղտիքի երկրամասի հիւսիսարեւմտեան լեռնային հատուածում, եղել է Հայոց պետականութեան պատմութեան բաղկացուցիչներէն՝ իր կարեւոր տեղն ունենալով մեր պատմութեան մէջ:

Եւ ոչ միայն: Միջնադարում Համշէնն իր ուրոյն տեղն է ունեցել նաեւ հայ հոգեւոր կեանքում՝ լինելով Հայ Առաքելական եկեղեցու թեմերէն մէկը: Այս փաստը լիարժէք ներկայացրել է Համշէնի պատմութեան հետազոտող, բանասիրական գիտութիւնների թեկնածու, ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի թուրքագիտութեան ամպլոնի դոցենտ, թուրքագէտ Լուսինէ Սահակեանը՝ իր «Համշէնը հայկական ձե-

ռագրերում» մենագրութիւնում:

Համշէնն այսօր ընդգրկուած է Թուրքիայի Ռիզէի նահանգի լեռնագոգերում՝ վարչականօրէն բաժանուած լինելով Չամլըհէնչի, Հեմշին (Համշէն), Հազար Համշէն, Չայլէի, Իքիզլերէ գաւառների:

Համշէնի պատմութեան մասին ամենայայտնի վկայութիւնը մեզ տանում է VIII դար. արաբական հալածանքներից խուսափող Համամ եւ Շապուհ Ամատունի իշխանները 789—790 թթ.-ին, Վասպուրականի Արտազ գաւառից մասամբ՝ Այրարատից), 12 հազար գաղթականներով տեղափոխուել եւ բնակութիւն են հաստատել բիւզանդական տիրապետութեան տակ գտնուող Խաղտիք (Խալդիա) բանակաթեմում: Բիւզանդիայի կայսր Կոստանդին VI-ի շնորհած Տամբար վայրում Համամ իշխանը հիմնել է Համամշէն (Համշէն) աւանը, որի անունով կոչուել է գաւառակը, հայ բնակչութիւնը՝ Համշէնցիներ, Համշէնահայեր, հէմշիններ: Քաջքար լեռան հիւսիսային լանջերի եւ շրջակայ ձորերի հետ կազմել է Համշէնի կիսանկախ իշխանութեան կորիզը:

*Այս էջը կը հովանաւորեն Թորոս եւ Անի Մայրիկեան*



# ՀՕՄ-ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Եւ իր 10 մասնաճիւղերը կը շնորհաւորեն  
Նոր Տարին եւ Ա.Ծնունդը  
իրենց բարերարներուն, նուիրատուներուն,  
բարեկամներուն եւ անդամներուն  
website [www.ars-canada.ca](http://www.ars-canada.ca)  
e-mail [ars-canada@bellnet.ca](mailto:ars-canada@bellnet.ca)



«ԱՐԱՉ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՎԱՆԳՈՒՎԸՐ

«ՌՈՒԲԻՆԱ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ԹՈՐՈՆԹՕ

«ՌՈՒԲԻՆԱ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՈՒԻՆԾԸՐ

«ԱՐԱԳԱՍՏ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՄԻՍԻՍՈԿԱ

«ՍԵՒԱՆ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՕԹԹԱՈՒՎ

«ՍՕՍԷ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՄՈՆԹՐԵԱԼ

«ԱՐԵՒ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՀԱՄԻԼԹԸՆ

«ԱՐԱՉ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ՍԵՆԹ ԳԱԹՐԻՆՉ

«ՇՈՒՇԻ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ԼԱԻԱԼ

«ՄԵՂՐԻ»  
ՄԱՍՆԱՃԻՂ  
ԳԷՄՊՐԻԾ



XV դարում յիշատակում են Համշենի իշխան (պարոն) Առաքելը, Դաւիթ Ա., Վարդը, Վեքեն, Դաւիթ Բ.: Վերջինս 1489 թ. պարտուել է օսմանեան թուրքերից, որից յետոյ Համշենի հայկական իշխանութիւնը դադարել է գոյութիւն ունենալ: Համշենում նշանակուել է թուրք կառավարիչ, բայց գաւառակի անմատչելի ձորերի հայ ձորապետները երկար ժամանակ պահպանել են ներքին ինքնավարութիւնը: Գրչութեան կենտրոններ են եղել Սուրբ Խաչիկ հօր, Քոչտենց, Խուժկայ վանքերը: XIII դարի վերջին Համշենով անցել է Հեթում պատմիչը, 1406 թ.-ին՝ իսպանացի դիւանագէտ Կրավիխօն:

XVIII դարի վերջին — XIX դարի սկզբին Համշենի հայերի նկատմամբ իրականացուել է բռնի մահմետականացման քաղաքականութիւնը: Համշենն այսօր գոյատեւում է բացառապէս թուրքական միջավայրում՝ պահպանելով հայկական անցեալի մասին յիշողութիւնը:

... Սեղանիս ՀՀ ԳԱԱ (Գիտութիւնների Ազգային Ակադեմիա) Պատմութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանի արժէքաւոր ուսումնասիրութիւններից մէկն է՝ «Համշեն. պատմաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր)» յօդուածը: Գիտնականն այն ներկայացրել է Հայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցին նուիրուած միջազգային գիտաժողովներից մէկի ժամանակ՝ Հայ Դատի եւ պահանջատիրութեան համատեքստում ներկայացնելով Համշենի պատմութիւնը:

Եւ ուշադրութեան արժանի դրուագներին մէկը հետեւեալն է.

«Պատմական գրականութեան մէջ կայ այն թիւր կարծիքը, թէ իբրեւ հայերն այստեղ յայտնուել են 8-րդ դարում, երբ, արաբական հալածանքներից խուսափելով, 789-790 թթ. Շապուհ Ա մատուռի իշխանի եւ նրա որդի Համամի գլխաւորութեամբ 12 հազ. գաղթականներ Արտազ, Արագածոտն, Կոտայք գաւառներից տեղափոխուել են բիւզանդահայատակ խաղտիք: Իրականում խաղտիքը, յաճախ մաս կազմելով Տայք աշխարհին, հնագոյն ժամանակներից եղել է հայաբնակ: Պատահական չէ, որ այստեղ ապրող առաջին բնակիչներին յոյներն անուանել են արմենոսալիբներ, այսինքն՝ խաղտիք-խալիբ երկրի հայ բնակիչներ: Ի դէպ՝ նման հայերը կազմել են ոչ միայն խաղտիքի, այլեւ ողջ Տայքի ու հիւսիսարեւմտեան Հայաստանի բնակչութիւնը՝ Ք.ա. 9-3-րդ դարերում՝ Արարատեան թագաւորութեան եւ Երուսաղեմականների ժամանակներում»:

Աշոտ Մելքոնեանն արձանագրել է մի կարեւոր փաստ. Համշենի կիսանկախ պետութիւնը, դիմակայելով ժամանակի

ուզմաքաղաքական վայրկեւորումներին՝ իր գոյութիւնը պահպանել է շուրջ 7 դար:

«Նկատենք, որ միջնադարեան Հայաստանի պատմութեան մէջ նման դէպքերը հազուադէպ են», գրել է նա:

Թուրքական շրջանակներն այսօր խեղաթիւրում են նաեւ Համշենի պատմութիւնը՝ նրանց վերագրելով թուրքական ծագում: Նրանց են միացել նաեւ ատրպէյճանցիները, ինչը Համշենի անցեալի նենգափոխութեան նոր դրսեւորումներից է: Հայոց պատմութեան կարեւոր մասը հանդիսացող Համշենի դէմ այս միտումնաւոր ու կեղծ «գիտական» յարձակումների եւ մեր գիտնականների կողմից տարուող ուսումնասիրութիւնների մասին զրուցել ենք ՀՀ ԳԱԱ-ի Պատմութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանի եւ Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի դեկան, փրոֆեսոր, թուրքագէտ Ռուբէն Մելքոնեանի հետ: Նրանց զրոյցների միջոցով փորձել ենք ներկայացնել Համշենը եւ Համշենցիներին՝ պատմութեան քառուղիներում:

«Անգամ բռնի մահմետականացումից յետոյ Համշենը շարունակում է պահպանել ազգային նկարագրի բազմաթիւ տարրեր»

... Փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանի՝ վերը նշուած յօդուածում ընդգծուած է մի կարեւոր գաղափար, որը եւս պէտք է դրուել Հայ Դատի համար պայքարի ուզմաքաղաքական մօտեցումների հիմքում՝ «հասունացել է պայքարի յաջորդ՝ շատ աւելի վճռական՝ Թուրքիայի կողմից հայութեանը հատուցելու փուլին նպատակաուղղելու ժամանակը»: Եւ այդ իմաստով նա կարեւոր է համարել ընդգծել, որ ճանաչման գործընթացը «Հայ Դատի հետապնդման ուզմապարտութեան միայն մարտավարական աստիճանն է, իսկ վերջնական նպատակը՝ կորուսեալ հայրենիքի վերադարձը»:


Մեր՝ բնիկ տիրոջից զրկուած Պատմական Հայաստանի այս կարեւոր հատուածը՝ Համշենն ու Համշենցին նոյնպէս չպէտք է մոռացուեն, քանի որ Համշենի պատմութիւնն ու անցեալը ժխտելու թուրքական քարոզչութիւնը Հայոց ցեղասպանութեան հերքման եւ հայատեաց գործելակերպի շարունակութեան դրսեւորումներից է:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ — Ելնելով ժամանակի նոր մարտահրաւէրներից եւ գիտակցելով ու իրատեսորէն գնահատելով հայ ժողովրդի ազգային իտէալների իրականացման համար մղուող պայքարի ճանապարհին նշարուող նոր պայմանների հեռանկարները՝ այսօր կենսական է դառնում նոր մօտեցումների, մարտավարական ձեւերի ընտրութեան խնդիրը: Այս տեսանկիւնից անհրաժեշտ է նորովի մեկնաբանել նոյնիսկ այնպիսի քաղաքական ինքնուրույն, որպիսին 1915 թուականից յետոյ մեր հայրենիքի ի սպառ հայաջնջման հանգամանքն է: Բանն այն է, որ այդ իրողութիւնը գերազանցապէս վերաբերում է քրիստոնեայ հայութեանը: Իսկ մահմետականացուած հայութիւնը, որն օտարացման ուղի էր բռնել դեռ միջնադարում, գարմանալի կենսունակութիւնը դրսեւորելով, իր ազգային դիմագծի շատ կողմերով, անգամ ազգային ինքնագիտակցութեամբ, դիմակայելով դարեր, գոյատեւեց ցայսօր: Ցաւալիւրդէն մինչեւ այժմ մենք աչքաթող ենք արել Հայ Դատի համար մղուող պայքարի նոր փուլում մեծ կարեւորութիւն ներկայացնող այս բացառիկ հանգամանքը: Միայն նկատենք, որ վերջին շրջանում արուած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ այսօր Թուրքիայի Հանրապետութեան

*Այս էջը կը հովանաւորեն Կարօ Եւ Նույիօ Ասիւսպէտեան*






 ԲՕՄ-ի Մոնթրեալի  
 «Սօսե» մասնաճիւղի վարչութիւնը  
 կը շնորհաւորէ ձեր Նոր Տարին եւ  
 Սուրբ Ծնունդը, մաղթելով որ 2021-ի  
 բոլոր օրերը ըլլան բարեբեր, շէն  
 ու պայծառ, առողջութեամբ եւ  
 արեւշատութեամբ լի, երջանկութեամբ  
 եւ բերկրութեամբ առլցուն:



արեւելեան եւ կենտրոնական նահանգներում, այսինքն՝ պատմական Արեւմտեան Հայաստանում ու յարակից գաւառներում մօտաւոր հաշուարկներով իսլամացած հայութեան շառաւիղների թիւն անցնում է մէկ միլիոնից, իրենց արմատները դեռ յիշող, երբեմն էլ՝ հայ զգացող այսպէս կոչուած «թաքուն» հայերին՝ 750 հազարից: Դա այն դէպքում, երբ պաշտօնապէս ճանաչուած քրիստոնէայ հայերի թիւը նոյն տարածքում պակաս է 5 հազարից:

— Պարո՛ն Մելիքեան, Հայոց Համէն գաւառի պատմութիւնը մեր հոգեւոր ժառանգութեան եւ պետականութեան պատմութեան կարեւոր մասն է: Որպէս պատմաբան՝ կը խնդրէի՝ Ձեզ յետադարձ հայեացքով գնահատել այս հանգամանքը:

— Առհասարակ հայոց պետականութեան պատմութեան նկատմամբ մեր մօտեցումները պէտք է վերանայել՝ այն իմաստով, որ մենք ոչ թէ դարեր շարունակ պետականութիւն չենք ունեցել, այլ՝ երբեմն չենք ունեցել: Այլ հարց է, որ թագաւորութիւնը՝ որպէս պետականութեան բարձրագոյն ձեւ, միջնադարում բացակայել է, բայց այն փոխարինուել է իշխանութիւնների պատմութեան: Այս իմաստով Համէնը եւս Հայոց միջնադարի ժամանակաշրջանի յստակ դրսեւորումներից է՝ վաղ միջնադարից մինչեւ նորագոյն ժամանակներում: Համէնը հանդիսանում էր հնագոյն պատմական Խաղտիք աշխարհի մի մասը՝ գտնուելով Արեւելեան Պոնտոսի լեռնաշղթայի շարունակութիւնը կազմող Պարխարի բարձրաբերձ լեռների հարաւային անտառապատ ու ջրառատ լանջերից մինչեւ Սեւ ծով՝ հիմնականում ընդգրկելով Փորթունա, Եւոզիոսի (Եւոզիոս, Եւոզիոսի) եւ Խաղտիք գետակների աւազանը: 8-րդ դարից կարողացել է պահպանել իր կիսանկախ վիճակը արաբական խալիֆայութիւնից, ապա մաս է կազմել Բագրատունեաց Հայաստանի եւ վերջինիս անկումից յետոյ պահպանել իր կիսանկախ կարգավիճակը: Սասունի, Զէյթունի, Շատախի, Սիւնիքի, Արցախի եւ լեռնային այլ համայնքների օրինակով Համէնը եղել է ինքնաբաւ՝ որոշակի քանակութեամբ հարկեր վճարելով պահպանել է կիսանկախ կարգավիճակը սելճուքներից, թուրքմենական ցեղերից, ապա նաեւ՝ Օսմանեան կայսրութիւնից: 18-րդ դարում Օսմանեան պետութիւնը նրանց պարտադրել է իսլամ, սակայն չի կարողացել վերացնել հայկական ինքնութեան միւս յատկանիշները՝ լեզուն, սովորոյթները եւ ամենակարեւորը՝ ազգային ինքնագիտակցութիւնը: Այդ ժամանակի հեղինակ Յակոբ Կարնեցիին Համէնի մասին գրում էր. «Ազգաւ հայ, կրօնով՝ վրացի կամ տաճիկ»: այսինքն՝ նրանք պահպանում էին ազգային ինքնագիտակցութիւնը, սակայն կամ իսլամադաւան էին, կամ՝ դարձել էին ուղղափառ-քաղկեդոնիկ:

— Իսկ որքանո՞վ ենք այսօր ճանաչում Համէնը ու Համէնցիներին՝ Օսմանեան կայսրութեան վարած ցեղապան քաղաքականութեան հետեւանքով մոռացուած մեր ազգի այս հատուածին:

— Այսօր Համէնի մի հատուածը՝ յատկապէս Հոպան կամ Խոպան եւ եւս 2 տասնեակ գիւղեր շարունակում են մնալ հայախօս ու շարունակում են խօսել էրզրումի բարբառի՝ Համէնի ենթաբարբառով: Իսկ թրքախօս Համէնցիների զգալի մասը ունի առաւել թուրք ազգայնական ինքնութիւն:

Փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը նշում է, որ բարեբախ-

տաբար, այսօր շարունակում են ուսումնասիրութիւնները Համէնի ուղղութեամբ.

— Այդ գործում մեծ դեր ունեն յատկապէս թուրքագէտ Լուսինէ Սահակեանը, Սերգէյ Վարդանեանը եւ ուրիշներ: Նրանք արդէն ունեն արժէքաւոր ուսումնասիրութիւններ: Իսկ Համէնի ուսումնասիրութիւնը պէտք է դրուի պետական բարձր մակարդակի վրայ: Նրանց՝ Համէնցիների հետ պէտք է լինել շատ զգոյշ եւ նուրբ վարուելաձեւ ունենալ՝ նախ նրանց չվնասելու, վախի մթնոլորտում նրանց հայկականութիւնից չվանելու եւ իրական արմատներին վերադարձնելու նպատակով: Յատկապէս բարդ է աշխատանքը Բաշ-Համէնում կամ Վերին Համէնում, որտեղ շատ են թրքախօս Համէնցիները եւ հնարաւորինս խորշում են դրսից եկած հայութեան հետ շփումից՝ իրենց նկատմամբ իշխանութիւնների ճնշումներին չենթարկուելու պատճառով:

— Իսկ ի՞նչ դեր պետք է ունենայ մեր պետութիւնը եւ յատկապէս Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը՝ նրանց հայ ժողովրդի գիրկը վերադարձնելու համար:

— Այսօր պետական մակարդակով նման աշխատանքներ չեն իրականացւում: Եւ իմ համոզմամբ՝ մեր պետական մարմինները խուսափում են՝ չունեցած միջպետական յարաբերութիւնները չբարդացնելու մտահոգութեամբ: Այստեղ կարեւորում են եկեղեցու դերը, որը երբեմն, հանդէս է բերում չափից աւելի զգուշաւորութիւն: Իմ խորին համոզմամբ՝ սա արդարացուած է, յատկապէս Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան պարագայում, որի իրաւասութեան ոլորտում է այս խնդիրը: Պատահական է, որ տասնամեակներ առաջ՝ 1960-ականներին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Պոլսոյ Հայոց Պատրիարք Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեանը քրտացած, իսլամ ընդունած բազմաթիւ հայ մանուկների բերեց Կ. Պոլիս եւ նրանց կրթութեան տալով՝ վերահայացրեց: Այդ երեխաների թիւում էր նաեւ Հրանդ Տինքի ապագայ կինը՝ Ռաքէլը: Եթէ աւելի կոշտ իշխանութիւնների օրօք հնարաւոր էր դա անել, ապա նման գործ կարելի է կատարել նաեւ այսօր, երբ քիչ թէ շատ տանելի մթնոլորտ է՝ ազգային խտրականութիւնների իմաստով:

Թուրքական պատմագիտական շրջանակների կողմից Համէնի անցեալը խեղաթիւրելու քարոզչութիւնը անհետեւանք էր անցել: Անդրադառնալով այս խնդրին՝ փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանն առանձնացնում է ցաւալի մի իրողութիւն, որի հետ հնարաւոր է հաշուի չհասնել.

— Համէնցիներին այդ իրողութիւնն էլ աւելի է մղում զգուշաւորութեան: Իսկ թուրքական պաշտօնական մօտեցումն այն է, որ Համէնցիները չփորձեն վերադառնալ իրենց արմատներին եւ շարունակեն մնալ «թուրքական հասարակութեան անբաժան մաս», որով էլ պէտք է բացատրել Համէնցիների առանձին շերտերի ակրեսիւ վերաբերմունքը հայութեան նկատմամբ:

— Պարո՛ն Մելիքեան, Համէնագէտներն ու բազմաթիւ Համէնցիներ ահագանգում են, որ Համէնի պատմութիւնը սկսել են «սեփականացնել» նաեւ ատրպէյճանցիները: Ի՞նչ է քաղաքական եւ քաղաքական ունի ատրպէյճանցի «պատմաբանների» այս հետեւողական գործունէութիւնը:

— Վերջին տարիներին, նկատում է փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը, ատրպէյճանցիները սկսել են «արջի ծառայութիւն» մատուցել իրենց աւագ եղբայրներին եւ աւելի

*Միս Լէր կը հովանաւորեն Քարգէն եւ Սիւնիք Կարասպետեան*



# «ՀՈՐԻԶՈՆ»ի 20րդ բացառիկը կը հովանաւորեն՝

Գրիգոր եւ Արփի Շիրիլեան  
Նազարէթ եւ Լորի Նազարեան  
Արա, Նայիրի, Սեւակ եւ Քամի Գրծիքեան  
Փոքրիկներ Ալէք եւ Լոռի Օլթաճեան  
Ռաֆֆի եւ Անի Պէքմէգեան  
Վիզէն եւ Անահիտ Յովսէփեան  
Նորայր եւ Ծովիկ Սէրէնկիւլեան  
Սագօ, Արագ, Լեւոն եւ Լենիա Եաղճեան  
Բժ. եւ Տիկ. Անտրէ եւ Նաթալի Պէշլեան  
Սիմոն եւ Սիլվա Փօլատեան  
Բժ. Օհան եւ Սեդա Թապաքեան  
Շանթ, Ալին, Լէա եւ Լարա Տօնապետեան

Փոքրիկներ Վանա եւ Շալօ Գարայեան  
Գրիգոր Տէր Ղազարեան  
Արսօ եւ Ալինա Գարրիլեան  
Վրէժ եւ Կարին Գասամանեան  
Մոնթրէալի Հայ Կեդրոնի Տարեցներու Միութիւն  
Զաւէն եւ Վարսենիկ Սարգիսեան  
Բարեկամ մը  
Սիմոն եւ Մարալ Հասրըճեան  
Բժ. Սարգիս Երեցեան  
Դուին, Շանթ եւ Սեւան Տօնապետեան  
Լեւոն եւ Բժ. Անի Հասրըճեան  
Վարանդ, Թամար, Ալիք եւ Սիլիա Պարսամեան



**Pharmacie  
Levon Benohanian et  
Mher Koubelian Inc.**  
Pharmaciens-propriétaires

T 450 688-4111  
F 450 681-5525  
proximlaval@gmail.com

3915, Boulevard Samson  
Laval, QC H7W 2G1

Lun. au vend. : 8h30 à 21h  
Sam. et dim. : 9h à 17h  
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկութիւն մինչև ձեր տունը.  
Շարքական դեղատուփիկի պատրաստութիւն.  
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)  
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում  
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝  
արեան բարակութեան (INR), շնչերակային  
ճնշման (tension artérielle), արեան շաքարի  
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի  
(cholesterol), եւն.

«կաթոլիկ» են դարձել, քան՝ Հռոմի պապը: Թուրքերին հաճոյանալու համար նրանք աւելի շատ ժխտողականութիւն են դրսեւորում, քան՝ նոյնիսկ թուրքերը Հայոց ցեղասպանութեան հարցում: Ատրպէյճանցիները Ֆինանսական լուրջ միջոցներ են ներդնում, հնարաւոր բոլոր եղանակներով ամբողջ աշխարհում պայքար են տանում հայութեան դէմ: Աւելին, փորձում են հակասութիւններ սերմանել հայերի եւ տարբեր ժողովուրդների միջեւ:

Եւ վերջին ժամանակներս սկսել են յաճախակի խօսել Զաւախքի խնդրի մասին՝ փորձելով վրացիներին ներշնչել մի թիւր տեսակէտ, թէ իբր Զաւախքի հայութիւնը սեպառատիտական ճգնաժամներ է հանդէս բերում եւ իբր վտանգ է ներկայացնում Վրաստանի տարածքային ամբողջականութեանը: Մինչեւ անգամ փորձում են նաեւ հայ-ռուսական յարաբերութիւնների վրայ բացասական ազդեցութիւն ունենալ՝ ռուս գրող եւ դիւանագէտ Ալեքսանդր Գրիբոյեդովի՝ 1829 թ. փետրուարին տեղի ունեցած սպանութիւնը վերագրել հայերին՝ այն դէպքում, երբ իրենք զբաղուած են բոլոր հարեւանների պատմութիւնն ու մշակոյթը գրականելով: նրանք լեզգիների նախնիների՝ աղուանների պատմութիւնը համարում են իրենցը՝ այն դէպքում, երբ իրենք թուրքալեզու են, լեզգիները՝ կովկասեան-դաղստանեան ժողովուրդ են: Ատրպէյճանական են համարում իրանական՝ սեֆեան, աւշարների եւ դաւարների շահական տոհմերի պատմութիւնը, մինչեւ անգամ՝ թուրքմենական կոյունլու ցեղերի պատմութիւնը: Վաղուց արդէն պետական մակարդակով Արեւելեան Հայաստանը՝ իր մայրաքաղաք Երեւանով ու Սուրբ Էջմիածնով, համարում են աղուանական-ատրպէյճանական: Վերջերս էլ գրոհեցին վերջին հարեւանի՝ վրացիների վրայ. երբ ծագեց Դաւիթ Գարեջիի ուղղափառ-վրացական վանական համալիրի պատկանելութեան հարցը, Ատրպէյճանի Գիտութիւնների ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս Եաղուպ Մահմուդովը յայտարարեց, որ Արեւելեան Վրաստանն իր թրիլիս (այսինքն՝ Թիֆլիս) մայրաքաղաքով ատրպէյճանական տարածք է, որն իբր յանիրաւի՝ Ստալինի մեղքով միացուել է Վրաստանին: Այս ամէնը պետական մակարդակով իրականացուող կեղծարարութիւն է, բոլոր հարեւանների նկատմամբ տարածքային յաւակնութեան վառ դրսեւորում: Անշուշտ, մասնագէտները քաջատեղեակ են այս ամէնին եւ պատահական չէ, որ միջազգային հեղինակաւոր ֆորումներում միշտ մատնանշում են ատրպէյճանական «պատմագրութեան» ընդգծուած կեղծ նկարագիրը:

Հայոց պատմութեան դէմ ուղղուած բոլոր դրսեւորումներին ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտը պատշաճ մակարդակով է արձագանգում: Փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը կարեւորում է այն գործօնը, որ վերջին տասնամեակի ընթացքում թուրք-ատրպէյճանական կեղծիքները բացայայտող աշխատութիւնները հրատարակում են նաեւ օտար լեզուներով: Եւ դա իրականացում է գիտականօրէն փաստարկուած նիւթի լուրջ քննութեամբ եւ զուտ գիտական ու զուսպ մակարդակով՝ ի ցոյց դնելով նրանց կողմից շրջանառուող դրոյթների ողջ անակնութիւնը: Նման ծանրակշիռ աշխատութիւններից մէկն էլ եղել է Երեւանի 2800-ամեակին նուիրուած կղերկտիւ մենագրութիւնը:

— Ատրպէյճանը չունի անցեալ եւ պատմութիւն: Կարո՞ղ ենք ասել, որ Համշէնի պատմութիւնը եւս խեղաթիւ-

րելով՝ նրանք ձգտում են իրենց գոյութիւն չունեցող ներկայութիւնը ցոյց տալ Հայկական բարձրաւանդակում եւ իրենց վերագրել հնագոյն անցեալ:

— Միանշանակ՝ այո՛: Այդ առիթով հետեւեալն ասեմ. երբ 2019 թ. Նոյեմբերին Ղազախստանում էի՝ միջազգային գիտաժողովի ժամանակ դազախ պատմաբանների հետ քննարկում էինք մեր ժողովուրդների պատմութեան հետ կապուած հարցեր: Եւ ի պատիւ իրենց, նրանք փաստեցին, որ ի տարբերութիւն ատրպէյճանցիների եւ թուրքերի (որոնք Միջին Ասիայից ու Փոքր Ասիայից Այսրկովկաս թափանցելով, ամրացել են հայերի, յոյների, ասորիների, վրացիների տարածքներում)՝ իրենք շարունակում են ապրել թուրքերի նախնական հայրենիքում եւ պատմութիւնը կեղծելու բնաւ ցանկութիւն չունեն:

Այսօրուայ ահռելի լրատուութեան պայմաններում, իմ խորին համոզմամբ, թուրքերի ու ատրպէյճանցիների՝ ուրիշ ժողովուրդների պատմութեան ու մշակոյթի իւրացումը, անխուսափելիօրէն դատապարտուած են ձախողման: Ինչպէս թուրքիան, այնպէս էլ Ատրպէյճանը շարունակում են մնալ բազմազգ կայսրութիւններ, որտեղ մշտապէս ոտնահարում են տեղի ժողովուրդների իրաւունքները. երեւոյթ, որը չի կարող լինել յարատեւ եւ, ի վերջոյ, յանգեցնելու է այդ կայսրութիւնների տրամաբանական վախճանին:

...Դարձեալ վերընթերցում եմ Աշոտ Մելքոնեանի «Համշէն. պատմաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր)» յօդուածը, որտեղ փրոֆեսորն առաջ է քաշում մի շատ կարեւոր փաստ եւս. 1890-ականներից սկսած, Օսմանեան իշխանութիւններն «իրենց հայակուլ գործունէութեան մէջ խտրականութիւն չդրեցին անգամ մահմետականացած հայերի նկատմամբ»: Եւ զանգուածային ջարդերի ժամանակ կոտորուեցին ու տեղահանուեցին նաեւ մահմետականացուած Համշէնցիները: Նրանցից փրկուած հատուածը յետագայում հանգրուանեց Սեւ ծովի արեւելեան առափնեայ շրջաններում եւ Հիւսիսային Կովկասում՝ շարունակելով զարգացնել իրենց մշակոյթը:

— Այսօր ցեղասպանութիւնից 105 տարի անց կարող ենք հպարտութեամբ ասել, որ մեր կորուսեալ Հայրենիքի՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ նոր սերունդների պատմական յիշողութիւնը շատ թարմ է, իսկ արեւան կանչը՝ զօրաւոր: Ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնում, Սեւ ծովի առափնեայ շրջաններում ապրում են հարիւր հազարաւոր հայեր, որոնք երբեք չեն մոռանում օտարի ձեռքում մնացած իրենց հայրենիքի՝ այսօր յուշ ու հեքիաթ թուացող պատմութիւնը: Սակայն պատմութիւնն ունի իր անակնկալները, ժամանակներն՝ իրենց քաղաքական մարտահրաւէրները: Այդ պատմական յիշողութեամբ զինուած՝ մենք պէտք է պատրաստ լինենք ընդունելու պատմութեան մարտահրաւէրները եւ արժանի լինելու հայրենի հողի տառապալից կանչին, առաւել եւս, որ ինչպէս իրաւացիօրէն նշում է մեր մեծ գրող Մուշեղ Գալշոյեանը, հողը երբեք չի մոռանում իր իրական տիրոջը: Արժանի լինենք այդ հողին տէր դառնալու առաքելութեանը,՝ տարիներ առաջ գրած իր մտքերն է վերահաստատում ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէն, փրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը:

Պատրաստեց Յասմիկ Պողոսեանը

*Այս էջը կը հովանաւորեն ՔԺ. Է. Կիւր. Կրուչըն Է. Յասմիկ Պատմաճեան*





[WWW.ADAMSELEVATOR.CA](http://WWW.ADAMSELEVATOR.CA)

*EDUARDO, PEDRO AND JOYCE  
OUGHOURLIAN*

***IN BUSINESS FOR OVER 40 YEARS  
RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,  
INSTALLATION OF ELEVATORS,***

*RBQ# 1812-6474-22*



***CARROSSERIE PRISME***  
***Peinture & Débosselage***  
***Garage Agréé***



**Expert en  
Infiniti et Acura**



**INFINITI**



**ACURA**

**Raffi Koushian**  
Propriétaire

**1430 rue Michelin Laval, Qc. H7L 5C2  
Tél: 450 967-3948 • Fax : 450 967-1642  
[carrosserieprisme@bellnet.ca](mailto:carrosserieprisme@bellnet.ca)**

# «Ամբողջական Հայաստան, ամբողջական հայություն». Բոլորս միասին կը հաւատա՞նք ասոր, թէ՞ ոչ



### Տանտէ՛ր, թէ՞ վարձակալ

Յաճախ, երբ անճրկած ենք, երբ ելք չենք գտներ մեզ ճգմող տազնապաններէն, յանկարծ ճշմարտութիւնը կը բացայայտուի երգիծագրի մը կողմէ:

Սոյն յօդուածը գրելու կը պատրաստուէի, երբ դիմատետրի էջիս վրայ երեւացաւ Լեւ Կամսարի սա դիպուկ խօսքը, զոր բարեկամ մը ուշադրութեանս յանձնեմ էր այս առաւօտ.

— Իմ կարծիքով, չարժէ ամեն գնով ազգ լինել: Իւրաքանչիւրը թող իր կարողութեանը նայի: Եթէ մէկը չի կարողանում ազգ լինել, պէտք չէ գօտել: Նա կարող է լիկուրդացնել իր հատ ու կենտ ազգային արժէքները, երկիրը վաճառել և գնալ մի մեծ ազգի մօտ որպէս վարձուոր ապրել: Աշխարհում բոլորն են տնատէր: (տես Հինգշաբթի 30 — «Կարմիր օրեր», 1957)

Տարինե՛ր, տասնամեակներ՝ առաջ ըստւած այս սուր խօսքը անգամ մը եւս կու գայ մեզ խայթել, հարուածել՝ անողոք կերպով. կարծես բան չէ փոխուած, չէ փոխուած մեծ երգիծագրին ժամանակներէն՝ խորհրդային տարիներէն ի վեր, չէ փոխուած անկէ շատ աւելի կանուխ ժամանակներէ ի վեր:

Իսկապէս արժանի՞ ենք, թէ՞ արժանի չե՛նք ազգ կոչուելու:

Յաւակնութիւնը չունիմ, որ կրնամ պատասխանել այս հարցումին, ոչ ալ այն բոլոր հոգեկիչ հարցումներուն որ ինծի ալ կ'ուղղուին ընկերներու, բարեկամներու, ծանօթներու կամ անծանօթներու կողմէ: Փոխարէնը այդ ու շատ այլ հարցումներու ամբողջ հոսանք մը յորձանուտի կը վերածէ միտքս:

Այո՛, 2020 նոյեմբեր 9–10 Հայաստանի անունով յանձն առնուած անձնատուութիւնը բազում հարցումներ կը

ստեղծէ մեր մտքերուն մէջ, եւ անկէ ի վեր թաւալող ժամանակը տակաւին մեզի չի շնորհեր անոնց պատասխանները գտնելու, նոյնիսկ պատահածը հասկնալու կարելիութիւնը: Կ'ենթադրեմ բանիմաց մարդիկ, եթէ կրնան տակաւին, պիտի փորձեն այդ ընել՝ մանրամասն քննութեան ենթարկել ազգային այս նոր Աղէտը, բացատրել անոր պատճառները, նոյնիսկ փորձել անոր հետեւանքները մեղմացնելու ճամբաներ որոնել:

Մենք սակայն՝ հասարակ «քաղաքացիներս», այսինքն՝ ինքզինք այս ազգի գաւակները դաւանողներս՝ առանց «զօռ»ի, առանց որեւէ այլ պատկանելութեան խտրութեան (կուսակցական, դաւանական, դասակարգային եւ այլն), անկեղծօրէն հարց տալու ենք մենք մեզի՝ ո՞վ ենք մենք եւ ի՞նչ կ'ուզենք:

Այո՛, ո՞վ ենք եւ ո՞վ կ'ուզենք ըլլալ կամ կը կարծենք ըլլալ:

Արդարօրէն կը հպարտանանք մեր անցեալով, մեր հաւաքական երկարակեցութեամբ, բայց գիտե՞նք՝ ինչո՞ւ մեր հայրենիքը իր փառքի օրերու 400 000 քառ. քմ տարածքներէն կծկուեր է 29 000 քառ. քմ հողաչերտի մը մէջ, որ, ազատագրեալ Արցախի ալ ճանաչումով՝ պիտի դառնար շուրջ 40 000, այսինքն մէկ տասներորդը պատմականին: Իսկ հիմա՞:

Մեր թուաքանակի ջախջախիչ մեծամասնութեամբ այսօր կ'ապրինք այդ տարածքներէն դուրս: Կամայ-ակամայ: Վերանկախացած կամ... «վերանկախացած» մեր հայրենիքի այս անցնող առաջին երեսնամեակին մենք զանգուածային կերպով չվերադարձանք մեր հողերը: Քիչեր միայն կարողացան, համարձակեցան: Բայց աւելցաւ դուրսը ապրողներու համրանքը: Ինչո՞ւ:

Արդարօրէն կը հպարտանանք մեր ժառանգած մշակոյ-

*Սիւսէր կը հոգիամաւորեն Սեւան, Մարախի եւ Արմա Ռայրամյուլեան*





# Integrity, trust, client focus and commitment to your success!

Since 2002, Nahabedian Wealth Management Group has been providing comprehensive services designed to address your financial concerns, simplifying your life, and giving you the confidence of knowing that your portfolio is in the care of trusted professionals.

Creating a lasting legacy for yourself, your family and your community. Our mission is to help our clients be and feel financially secure.

Contact us today to build a personalized plan designed to meet your goals, protect and grow your wealth.



**Paul B. Nahabedian**  
Vice-President, Portfolio Manager  
514-878-5111 | paul.nahabedian@rbc.com

**Nahabedian Wealth Management Group of RBC Dominion Securities**  
1 Place Ville Marie, 5th Floor  
Montreal, QC H3B 1Z3  
www.paulnahabedian.com



**Wealth Management  
Dominion Securities**

RBC Dominion Securities Inc.\* and Royal Bank of Canada are separate corporate entities which are affiliated. \*Member-Canadian Investor Protection Fund. RBC Dominion Securities Inc. is a member company of RBC Wealth Management, a business segment of Royal Bank of Canada. © / ™ Trademark(s) of Royal Bank of Canada. Used under licence. © 2020 RBC Dominion Securities Inc. All rights reserved. 20\_90327\_C100\_004

**CASSANDRA HEALTH CENTRE**  
 I.D.A. PHARMACY  
**CASSANDRA CLINIC**  
 WALK-IN & FAMILY PRACTICE  
 416.331.9111  
 Dr. Marinossyan accepting new patients (416) 331-9111

<b>Dr. Rupert Abdalian</b> Family Physician
<b>Dr. Mari Marinossyan</b> New Family Doctor
<b>Dr. Omayma Fouda</b> Family Physician
<b>Dr. H. Kavazanjian</b> Family Physician
<b>Dr. I. Manhas</b> Family Physician

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճշման քննութիւն եւ հետետղականութիւն՝ անվճար
- Շաբաթախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար պատասխանութիւն
- Տարեցներու 10% զեղ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք թփչկները տեսնել առանց ժամադրութեան:

**Դիմեցէք մեզի եւ պիտի դատարար մեր մնայուն յաճախորդը:**

հասցէ՝ 2040 Victoria Park Ave.  
(Victoria Park & Cassandra)  
Toronto, Ontario M1R 1V2  
Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048

CASSANDRA I.D.A. PHARMACY

ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐ՝  
ՊԱՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՐԱԳՈՐԾՆԵՐ՝  
ՄԱՐԱԼ ՊԱՆԵԱՆ  
ՎԱՐՏԱՆ ՊԱՆԵԱՆ

ARMENIAN MEDICAL CENTRE  
& PHARMACY

PHARMACISTS  
SARKIS BALIAN, BScPhm, RPh  
MARAL BALIAN, PharmD, RPh  
VARTAN BALIAN, PharmD, RPh

Walk-in Clinic onsite: (416) 331-9111





Թով: Որքա՞ն տէր ենք անոր: Ծանօթ ենք անոր: Կ'ապրի՞նք անով: Եւ ի՞նչ աւելցուցինք մենք անոր վրայ: Կապկումներէ ու կրկնումներէ անդին: Ի՞նչ նոր փայլատակումներ եղան, համաշխարհային քաղաքակրթութեան վրայ ի՞նչ յաւելում կատարեցինք մեր նոր ստեղծագործութիւններով, գիտութեամբ ու մասամբ նորին:

Որքա՞ն հպարտ ենք մեր ոսկեղենիկ լեզուով: Մեզմէ քանի՞ն, Հայաստանի մէջ թէ՛ Սփիւռքի, կրնայ անսխալ երկու տող տակ-տակի գրել, երկու խօսք յանպատրաստից արտասանել: Արտերկրի բազմամիլիոն մանուկներէն ու պատանիներէն քանի՞ն հայկական վարժարան կը յաճախէ, կրնայ յաճախել, ծնողքը կ'ուզէ՞, որ յաճախէ:

«Յաղթելո՞ւ» էինք... Որքա՞ն պատրաստուած էինք յաղթելու՝ երգելէ ու ծափելէ անդին: Կրցե՞ր էինք կուտակել անհրաժեշտ ներուժը՝ մարդկայինը, նիւթականը, տնտեսականը, քաղաքական-յարաբերականը, բայց մանաւանդ գիտականն ու գինականը: Ինչո՞ւ է էինք կրցեր: Ասկէ ետք պիտի կարենա՞նք:

Ու «միասնական» էինք, միացեալ: Նոյնիսկ հռչկագիր ստորագրեցինք Մեծ եղեռնի հարիւրամեակին: Եւ կ'ուզենք թշնամիին առջեւ մի՛շտ այդպէս երեւիլ: Սակայն վտանգաւո՞ր էր այդ միասնականութիւնը: Մեզ իբր խամաճիկ խաղցանել ուզող գերութեան համար հանդուրժելի չէր մեր միակամութիւնը: Պէտք է վերածուէինք հակադիր մասերու՝ «սեւ» ու «սպիտակ»:

Ու չկրցանք չենթարկուիլ: Ասկէ ե՞տք:

Իսկ ի՞նչ է մեր ուզածը՝ բոլորի՞ս ուզածը: «Ազատ, անկախ, միացեալ»: Ազգովին որդեգրե՞ր ենք այս նպատակը, թէ՞ ոչ:

Կամ՝ «Ամբողջական Հայաստան, ամբողջական հայութեամբ»: Բոլորս միասին կը հաւատա՞նք ասոր, թէ՞ ոչ:

Այս նպատակները ազգի՞նն են, թէ՞ անոր մէկ փոքր,

անուղղայ մասին նպատակներն են: Կամ՝ երազները:

Եւ ինչպէ՞ս կ'երեւակայենք կեանքը այդ ապագայ, այդ երազային կեցութեան մէջ:

Սպարազինեալ, թշնամիներով շրջապատուած, միշտ յարձակումի հաւանականութեան ենթակա՞յ, թէ՞ խաղաղ, շրջապատին հետ հաշտ ու գործակից, միասնաբար աւելի լաւ աշխարհ մը ստեղծելու ջանադիր: «Երջանի՛կ»...

Աշխարհ մը ուր վերջ գտած ըլլայ ընչաքաղցուցիչներն ու նիւթապաշտութիւնը, որ զերծ ըլլայ ամեն բռնութենէ, ձերբազատած ամեն խտրականութենէ, ուր իւրաքանչիւր հաւաքականութիւն վայելէ ապրելու՝ մարդավայել՝ ապրելու անսակարկելի իրաւունք, ուր ունենայ ազատօրէն իր Աստծոյն աղօթելու, անկաշականդ իր երգերը երգելու, ստեղծագործելու եւ իր ինքնուրոյն մշակոյթով սեփական ինքնութիւնը դրսեւորելու անբռնաբարելի հնարաւորութիւն, ուր յառաջանայ մարդու գոյութեան սպառնացող բոլոր բնական ու անբնական վտանգները յաղթահարելու համամարդկային պատրաստակամութիւն:

Ի՞նչ կ'ընենք այս աշխարհը յառաջացնելու համար: Մեզմէ իւրաքանչիւրը անհատապէս, ու ազգը՝ որպէս հաւաքական ուժ: Ո՞ւր են մեր աստղերը աշխարհի բեմերուն վրայ: Ո՞ւր են մեր առաջամարտիկները աշխարհի ա՛յդ ճակատներուն վրայ:

Այո՛, երկար է ճանապարհը մեր առջեւ՝ կորուսեալ դրախտը վերագտնելու համար: Պիտի պայքարի՞նք, պիտի արժեցնե՞նք մարդ ըլլալու մեր կոչումը, հայ ըլլալու մեր արժանապատիւ գոյութիւնը: Առանց յոյսը կորսնցնելու: Անվհա՛տ:

Այլ խօսքով, պիտի ըլլա՞նք տանտէր լիբրաւ...

ՎՐԷԺ-ԱՌՄԷՆ

*Այս էջը կը հովանաւորեն Ռամբիկ Եւ Պրսի Գարսայեան*





# VINNIE GAMBINI

FAUBOURG BOISBRIAND

L'ENDROIT IDÉAL POUR VOS GROUPES  
ET VOS OCCASIONS SPÉCIALES!



Dîner, Souper et 5@7 au Bar  
Le lieu privilégié des  
gens d'affaires,  
entre ami(e)s ou en famille.

 Joignez-nous  
vinnie gambinis boisbriand

3360 des Grandes Tourelles, Boisbriand, Qc J7H 0A2 450.420.5000

Réservez dès maintenant

450.420.5000



*Jacques Varbedian*

*Digital*

*Professional Photography & Video*

*CALL us 416-722-9225*



# Արցախեան Պատերազմի Սպիտակ եւ Մոխրացած Սպիտակի Կողմերը

«Պէտք է անդադար գորացնել ազգի ռազմունակութիւնը, մարտական ոգին, բանականութիւնը, երբեւէ չզրկել իր յուսալի ապաւէնէն նուրէն, քանզի սուրբ, որ միշտ պատրաստ է շողալու, խաղաղութեան պահպանման լաւագոյն երաշխիքն է»:

Ֆրանսացի Փիլիսոփայ Ալպեր Գամբու

## Նոյեմբեր 7-8 «Պատերազմի սպիտակ կողմը»

Այո՛, պատերազմը կործանարար մեծագոյն չարիք է, սակայն պէտք է անտեսել «ամէն չարիքի մէջ բարիք կայ» իրողութիւնը:

Ի՞նչ «բարիքներ» տուաւ մեզի արցախեան թէժ պատերազմը, որուն ամենակործանարար կողմը, մեր երիտասարդ սերունդի դարուն կեանքերու սրբազան զոհաբերութիւնն էր... ապա տարածքներու կորուստը:

Պատերազմի սպիտակ կողմի առաջին երանգը, մեր ազգային ոգիի զարթօնքն էր, վերադարձն էր դէպի մեր արմատներ:

Պատերազմի մեկնարկէն անմիջապէս ետք, «մեր ժողովուրդը ազգ դարձաւ» եւ ազգը՝ բանակ: Հայը ապրեցաւ միասնական եւ դարերէ ի վեր կերտուած իր իսկական կերպարով:

Պատերազմի ընթացքին, մեր հերոսները իրենց տեսակով ապացուցեցին, որ «Սասունցի Դաւիթ»ը ոչ թէ առասպել է, այլ մերօրեայ իրողութիւն, առօրեայ կեանք:

Առաջնագիծին պայքարող յունահռոմէական ոճի ըմբիշ, ողիմպիական խաղերու ակոյտեան Միհրան Յարութիւնեան ըսաւ, - «Այստեղ մեր նախնիները ապրած են, այստեղ մեր տուներն ու հողերն են: Ես տրամադրուած չեմ մեռնելու, բայց եթէ հարկ ըլլայ, ուրեմն ես այստեղ կը մնամ ու կը մեռնիմ իմ հողիս մէջ, քան այդ օրը կը տեսնեմ իմ աչքերով»: Այսպիսին էր պատերազմի դաշտին մէջ մահուան աչքերուն նայող մեր պայքարող տղաներու ոգին...

Հերոսածին հայրերու եւ մայրերու մէջ եղան անասելի արիւնթիւն ցուցաբերող անհատականութիւններ. Արցախցի յայտնի լրագրող, հրապարակախօս Միքայէլ Հաճեան, որուն մէկ որդին զոհուեցաւ արցախեան քառօրեայ պատերազմին, երկրորդը՝ վերջերս ընթացող ճակատամարտերուն, կոչով դիմեց հանրութեան՝ ըսելով, որ չվհատին, պահեն իրենց ներքին ուժը եւ շարունակեն յամառօրէն պայքարիլ, գինուորագրուել եւ կանգնիլ հայրենիքի պաշտպաններու կողքին:

Բազում հայրեր մարտի դաշտ գացին իրենց որդիներուն հետ, անոնցմէ մէկը տուն վերադարձաւ իր զոհուած զաւակին հետ, սակայն վերադարձաւ միայն յուղարկաւորելու համար, եւ յաջորդ օրը դարձաւ ռազմաճակատ:

Որդեկորոյս բազում մայրեր խոր ցաւ ապրելով հանդերձ, հպարտացան իրենց զաւակներուն սիրագործութիւններով եւ պայքարը մինչեւ վերջ շարունակելու կոչ ըրին:

Այս պատերազմին ալ Արշակ Թադաւորին ուժ տուող հողը շարունակեց արիւնթիւն տալ եւ յարատեւ պիտի տայ:

Այս առումով մենք սահմանին յաղթեցինք, հայ մար-



տիկի ահաբեկիչներն անգամ ահաբեկող սիրագործութիւններն ու մարտունակութեան համբաւը տարածուեցաւ աշխարհով մէկ:

ՌԴ Հետախուզութեան գնդապետ Ալեքսանդր Ժիրին վկայեց, - «Մէկ հայ գինուորը կրնայ միայնակ կռուել Ալիեւի ահաբեկչական մէկ զօրամիւտերուն դէմ եւ մէկ միլիմետր անգամ չնահանջել: Հայերը ունին մարտական բարձր ոգի, որ անգնահատելի է»:

Հայ մարտիկները պատերազմին ցուցաբերեցին փայլուն մարտունակութիւն եւ անոնց շնորհիւ օտարներ անգամ «հայացան». Արցախի մէջ WarGonzo նախագիծի հեղինակ Մէմէն Բեկով, որ պատերազմի սկիզբէն մինչեւ վերջ առաջնագիծին էր ըսաւ, - «Ես հայ չեմ, բայց հասկցայ, թէ որքան դժուար է հայ ըլլալը, առաւել եւս՝ հայ գինուոր, ես սկսած եմ մտածել հայու պէս»:

Պատերազմի սպիտակ կողմի երկրորդ երանգը Սփիւռքի Զարթօնքն ու ողջ հայութեան միասնութիւնն էր. բացառութիւններ միշտ եւ ամէն տեղ կան, սակայն պատերազմական քառասուն օրերուն ընթացքին, ընդհանուր առմամբ հայութեան միասնական ուժի զօրութիւնը կը հասնէր սահմանին մարտնչող հայ գինուորին եւ առաւել կ'ոգեւորէր գինք: Սփիւռքի մէջ նոյնիսկ հայկական համայնքէն հեռացած հայեր, ոգեւորուած տիրող մթնոլորտէն հայադարձուեցան եւ իւրաքանչիւրը փորձեց իր առաւելագոյն ներդրումը ունենալ եւ նեցուկ կանգնիլ Արցախին:

Սփիւռքը իր աննախադէպ աշխուժութեամբ, նուիրատուութիւններով ու ապրումներով, գիշեր ցերեկ իրադարձութիւններուն հետեւելով ապրեցաւ գինուորի ու Արցախի հետ:

Հայաստանի մէջ տիրող սեւ ու սպիտակի մթնոլորտը վերացաւ, Արցախը ամէն բանէ վեր էր, բոլորի համար ամենակարեւորը հայ գինուորի թիկունքը ամուր պահելն էր, անոր կարիքները հոգալը եւ անոր սէրը ու ջերմութիւնը փոխանցելը:

Հասարակութիւնը ինքնակազմակերպուեցաւ եւ իր առաւելագոյն ջանքերը ի գործ դրաւ տնտեսական այս ծանր պայմաններուն մէջ անգամ՝ ամէն ինչով աջակցելու:

Արցախէն տեղափոխուած արցախցիներու շնորհիւ՝ Երեւանի մէջ սփռուեցաւ ժինկիալով հացի, Արցախի փախլաւայի, տարատեսակ թթուներու եւ այլ ուտեստներու բուրբ, որ Երեւանը ողողեց Արցախեան մշակոյթով ու արցախցիի օրինակե-

*Այս ֆոթո կը հովանաւորեն Արցախ եւ Արցախի Դաշնակազմը*





Avant tout, beaucoup de santé à vous et à vos familles

**514 381 0037**  
9490 boul. L'Acadie

Livraison Gratuite  
[www.restoamir.com](http://www.restoamir.com)



# L. DANIEL HICKS

BARRISTER AND SOLICITOR  
KASSABIAN LAW PROFESSIONAL CORPORATION

Shops at Don Mills  
8 Sampson Mews, Suite 203  
Toronto, Ontario  
M3C 0H5

Tel: 416-443-9494  
Fax: 416-443-0575  
e-mail: [danhicks@kassabianlaw.ca](mailto:danhicks@kassabianlaw.ca)

լի կերպարով, կերպար, որ պատրաստ է բոլոր դժուարություններով հանդերձ իր աշխատանքով վաստակել:

Այս բոլորն ոգևորության նաեւ երեխաները՝ Կիրովականցի Մհերը ընկոյգ վաճառելով աւելի քան մէկ միլիոն նուիրեց հիմնադրամին: Գիւղի մը մէջ ապրող թոշակառու ամուսիններ վաճառեցին իրենց միակ կովը եւ գումարը տրամադրեցին հիմնադրամին: Մեծերու եւ փոքրերու կողմէ նամանորինակ բազմաթիւ նախաձեռնություններու շնորհիւ նաեւ, բարձրացաւ հիմնադրամի հանգանակութեան գումարին նշաձողը:

Սպիտակի կարեւոր երանգներէն մէկը՝ մանուկներուն համար հեռուստատեսային դիպաշարերու մարդասպաններու կերպարներուն փոխարինեցին մերօրեայ հերոսներու կերպարները:

Այս բոլորին գուգահեռ Իշխանական լայվերը դադրած էին:

**Նոյեմբեր 10-11 «Պատերազմի մոխրացած Սպիտակ կողմը»**

Նոյեմբեր 9-ին, երբ վարչապետ Փաշինեան ստորագրեց տիրահոսչակ փաստաթուղթը, բոլորս կրեցինք Հայկ Նահապետէն մինչ օրս ծնած բոլոր հայերու ցաւերը, եւ նահատակներու արեամբ սրբազնացած հողին մորմոքը: Դժուար է համագոր բառ գտնել այս ապագային կեցուածքը բնութագրելու համար, նոյնքան ցաւալի է այս բոլորին արդարացում գտնողներուն կեցուածքը:

Մոխրացաւ Սպիտակի այն կողմը, որ մխիթարութիւն էր որդեկորոյս մայրերուն համար. անոնք իրենց ցաւին տակ կքած կը հպարտանային, որ իրենց զաւակները զոհուեցան յանուն հայրենիքի, բայց ինչպէս մխիթարուին հիմա, երբ իրենց զաւակներուն արեամբ շողախուած հայրենիքի նոյն բաժինը նուիրուեցաւ զիրենք սպաննած թշնամիին, եւ նուիրուեցաւ յաղթանակը կերտելէն ետք, հազարաւոր զոհեր տալէն ետք:

Ձարթօնք ապրած ու աւելի հայացած հայութիւնը աւելի խոր ցաւ ապրեցաւ... երբ դաւադրաբար ստիպեցին հազարաւոր զոհերու, վիրաւորներու եւ հոգեբանական ծանր ապրումներու գնով կերտուած յատկապէս Շուշիի յաղթանակը վերածել պարտութեան եւ այլ տարածքներու հետ նուիրաբերել թշնամիին...

Իշխանական լայվերը վերսկսան եւ դարձեալ գլուխ բարձրացուց պառակտումը՝ խաթարելով միասնական ոգին: Աւելին՝ սփռուեցան կեղծ «գինուորներու» լայվեր, որոնք մոլորութեան մատնեցին յատկապէս Սփիւռքի հասարակութիւնը:

Յաղթելու ենք թոթովող մանուկներուն պատասխան չունեցանք.

Հերոսները իշխանութեան շրթներով մեղադրուեցան, պոռթկումը մեծ էր. 17 կուսակցութիւններու նախաձեռնութեամբ՝ վարչապետի հրաժարականը պահանջող աւելի քան 100.000 քաղաքացիներ, որոնց շարքին էին նաեւ արցախցիներ, պատերազմի մասնակիցներ, զոհուածներու հարազատներ, մեղադրուեցան աթոռամոլութեան ու Արցախի պատերազմի ընթացքին հնչող կոչերուն անտարբեր մնալու մէջ: Մինչ ճակատէն եկած կամաւորներ վկայեցին, որ իրենցմէ շատերուն առիթ ալ չեն տուած մասնակցելու պատերազմին,

բազում կամաւորագրուածներ հաստատեցին, որ արձանագրուած են պատերազմին մասնակցելու եւ օրեր շարունակ ստացած նոյն պատասխանը,- «ձեր հերթը չէ եկած, երբ օրը գայ տեղեակ կը պահենք»:

Նոյեմբեր 16-ի լոյս 17-ին ՀՀ վարչապետ տողատակերով սպառնաց քաղաքացիական պատերազմ սկսիլ, որ արեան գնով աթոռ պահելու մոլուցք էր: Սկիզբ առին պատգամաւորներու եւ պետական պաշտօնեաներու հրաժարականները: Հրապարակի մէջ հանրահաւաքը շարունակուեցաւ՝ կրելով «Արցախի փրկութեան ազգային ազատագրական պայքար» անունը:

Վարչապետը Շուշիի անուանեց դժբախտ ու դժգոյն քաղաք...

Իշխանութեան անդամներու միջեւ մեղադրանքներ հնչեցին...

ՀՀ նախագահը իր ուղերձով յայտարարեց, որ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնները անխուսափելի են...

Եղածը եղաւ... թափ տալով յուսահատական մթնոլորտը՝ այսօր պէտք է դարձեալ յառնել... մոխրացած սպիտակ գոյնը պէտք է վերականգնուի... առաջին անգամ չէ, որ հայ ժողովուրդը ցաւը կը վերածէ նոր ուժի եւ կը շարունակէ պայքարել ու ծագկեցնել ՀԱՅՐԵՆԻՔը:

Մեղաւորներ գտնելու փոխարէն պէտք է իրավիճակը բարելաւելու ելքեր գտնել, արդար իշխանութիւն չկայ... բայց երկիր ծախող ու սերունդ ոչնչացնող իշխանութիւն հանդուրժելը, ոչ թէ պետական մտածողութիւն է՝ այլ երկիրը վերջնական կործանման տանելու անընդունելի քայլ:

Միասնանաք, վերազինուելիք նոր ուժով եւ պայքարինք «գահին հայ իշխան տեսնել» ու յոյսով:

Յովհաննէս Թումանեանի հանձարեղ խօսքերը թող ուղղորդեն մեզ՝ դէպի սպիտակ ու լուսաւոր նոր օրեր...

«Բայց հիմ ու նոր քո վերբերով կանգնած ես դու կենդանի,

Կանգնած խոհուն, խորհրդաւոր նամբի նորի ու հրնի.

Հառաչանքով սրբոյ խորհից խօսք ես խօսում Աստծու հետ

Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղէտ,

Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ տի ասես աշխարհից

Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին

Յոյսի՝ հայրենիք, Լոյսի՝ հայրենիք:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,

Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով նառագած, Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,

Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին, Ու պոետներ, որ չեն պրդծել իրենց շուրթերն անէծ-

քով, Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,

Իմ նո՛ր հայրենիք, Հըգօ՛ր հայրենիք»

Նայիրի Մկրտիչեան

*Միշտ էլք կը հովամաւորեն Գրիգոր եւ Քրիստիան Մայրապետան*



# Zack's

MEDITERRANEAN  
GRILL



2555 Victoria Park Ave, Unit 17  
Scarborough, Ontario  
M1T-1A3

Tel: 416-787-1313  
zacksgrilltoronto.ca



Jerusalem  
Shawarma



Murat Armutlu, CPA, C.A.

Vahakn Kapriyel Arapyan, CPA, CGA

*"it's not what you **earn**,  
it's what you **keep** that counts."*



- Financial Statement
- Management Consulting
- Government Subsidies
- Financial & Tax Consulting
- Bank Financing

Armutlu & Arapyan Inc.

6611 Boul. Thimens, St. Laurent, Qc, H4S 1W2

Tel: 514.855.0012 Fax: 514.855.0004

murat@armutlu.ca vka@arapyan.com





# ՅԱՆՈՒՆ ՄԵՐ ԴԱՏԻՆ, ՅԱՆՈՒՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ



## ԿԱՌՈՅՑ

Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը աշխատանք կը ծաւալէ համագանատական առումով, առաւելաբար մայրաքաղաք Օթթաուայի մէջ, դաշնակցային օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու մակարդակի վրայ: Իրեն զուգահեռ կը գործեն Հայ Դատի տեղական յանձնախումբերը, Լահանգային թէ քաղաքապետական օղակներու մէջ՝ Մոնթրէալ, Լաւալ, Թորոնթօ, Վանգուվըր, Գեմպրիճ, Համիլթըն, Սենթ Գաթրիսզ եւ Ուինծըր քաղաքներու Հայ կեդրոններէն:

## ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Մեր գործունեութեան յենարանն ու ուժի աղբիւրը առաջին հերթին մեր ժողովուրդն է: Անոր է որ կը դիմենք ամենէն առաջ, որքէտ արշաւի համընդհանուր մասնակցութեան եւ ժողովրդական ալիքի ծաւալ տալու համար:

## ԳՈՐԾԱԴԱՇՏ ԵՒ ՆՊԱՏԱԿԱԿԵՏԵՐ

Հայկական Ցեղասպանութեան ճանաչում, Հայաստանի Հանրապետութեան հզօրացման ուղղուած քայլեր, Արցախի ինքնորոշման իրաւունքի ամրագրում, Սփիւռքի զաղթածախներու յանձնանում, ասոնք են գլխաւոր քնազաւանները մեր գործունեութեան:



**Մեր կապի տուեալները**

**Մայր գրասենեակ, Օթթաուա**  
130, Albert Street, # 1007,  
Ottawa, Ontario K1P 5G4  
Tel.: (613) 235-2622 • Fax: (613) 238-2622  
E-mail: national.office@anc-canada.com  
Website: www.anccanada.org

**Մոնթրէալի գրասենեակ**  
3401, Olivar Asselin,  
Montreal, Quebec H4J 1L5  
Tel.: (514) 334-1299 • Fax: (514) 334-6853

**Թորոնթօյի գրասենեակ**  
45 Hallcrown Place,  
Willowdale, Ontario M2J 4Y4  
Tel.: (416) 491-2900 • Fax: (416) 491-2211

**Թիկունք կը կանգնիմ Հայ Դատին**  
**I support the Armenian Cause**  
**Je soutiens la Cause Arménienne**

Այո, կը փառիարիմ զօրակցիլ Հայ Դատի աշխատանքներուն: Ներկիակ կը գտնեք նոյնքատուութիւնս, յղուած **A.N.C.**-ի:

Yes, I want to support the ANCC and the Armenian Cause. Please find my donation enclosed, payable to the **A.N.C.**

Oui, je desire appuyer le CNAC et la Cause Arménienne. Veuillez trouver ma donation ci-jointe, à l'ordre de **A.N.C.**

20\$  50\$  100\$  200\$  Այլ/Autre/Other \_\_\_\_\_

Name / Nom \_\_\_\_\_

Address / Adresse \_\_\_\_\_

Tel / Tél: \_\_\_\_\_

E-mail / courriel: \_\_\_\_\_

Կը փառիարիմ նաեւ մաս կազմել «Հայ Դատի Բարեկամներ»ու շրջանակին: Ուղարկեցէք ձեր տեղեկատուութիւնը վերոյիշեալ րասցէներուն:

I would also like to be a member of the "Friends of Hay Tad" circle. Send your information to the above-mentioned addresses.

J'aimerais aussi faire partie du cercle «Amis de Hay Tad». Envoyez votre information aux adresses mentionnées ci-dessus.



# The Meaning of Sèvres after a Century

By Henry Theriault



This 100th anniversary of the Treaty of Sèvres has focused much Armenian attention on it. But, does the Treaty of Sevres have relevance today? If so, in what way?

One answer is to ask whether the treaty still has legal force. It was not ratified by Turkey or Armenia, but can it still be considered in force for the Republic of Turkey, the successor state of the Ottoman Empire that signed the treaty? Some taking up this question assert that it is. For instance, Michael Sosikian, in a July 27, 2020 *Asbarez* commentary entitled, "[Sèvres Treaty Supersedes Any Other, Especially Lausanne,](#)" offered an argument for why the treaty is still legally binding, even if it was not ratified by Turkey or Armenia. The crux of his case is that the Sèvres Treaty, unlike the Lausanne Treaty, was signed by "High Contracting Parties," and according to the 1969 Vienna Convention on the Law of Treaties, this makes it binding regardless of ratification. Unfortunately, the Vienna Convention contains a clause indicating that it is non-retroactive. It thus cannot apply to Sèvres. That does not mean other angles are not possible, and commentators have suggested other lines of reasoning, such as the fact that Armenia was not a party to the Treaty of Lausanne.

Yet, no matter what the approach, the non-ratification of Sèvres remains a powerful impediment to any claims of its direct legal enforceability today. That

does not mean, however, that the provision of particular importance to Armenians, Article 89, does not have legal implications. Article 89 states:

*Turkey and Armenia as well as the other High Contracting Parties agree to submit to the arbitration of the President of the United States of America the question of the frontier to be fixed between Turkey and Armenia in the vilayets of Erzerum, Trebizond, Van and Bitlis, and to accept his decision thereupon, as well as any stipulations he may prescribe as to access for Armenia to the sea, and as to the demilitarisation of any portion of Turkish territory adjacent to the said frontier.*

While this article, of course, has no more legal force than the treaty as a whole, Ara Papiian has argued that this does not mean the Arbitral Award that came out of the Sèvres process is not a legally enforceable document. On the contrary, the Arbitral Award determined by the group set up by President Wilson and given his official seal is in fact legally binding. This is a highly interesting argument, which turns on the independence of the Arbitral process, once it was entered into, from the treaty. In other words, the treaty article refers to a process that was in fact carried out despite the fact that the treaty never came into force. By the facts that (1) Turkey agreed in the treaty negotiations to the Arbitral process and (2) the Arbitral process was actually completed, Turkey is bound by the

*Միջուկային հարաբերությունները Կիլիկիայի Գեղարքայի Գեղարքայի*

Arbitral Award even if this is not because the Treaty of Sèvres is binding.

This is a strong argument, but can still be countered by arguing that in fact the Arbitral Award cannot be separated from the Treaty of Sèvres. The separation of treaty from the Arbitral process is supported by the fact that the United States was not a party to the Treaty of Sèvres. Thus, the Arbitral process was in this sense independent from the treaty. But, one might reason that the facts that the treaty negotiations generated the Arbitral process and that the latter would never have occurred without the former means that the Arbitral Award is derivative of the treaty. At the same time, this is not conclusive, as it is possible for the derivative to have legal force even if the document resulting from the negotiations that gave rise to it do not. In fact, one might assert that, because the Arbitral process arose from the negotiations rather than beginning only after the treaty was signed, the process was independent of the final treaty, even if the matter is confused by the fact that the treaty includes an agreement to accept the Arbitral Award decision.

Even if the issue could be settled in favor of the present legal applicability of the Arbitral Award, it is not clear that would mean anything. Indeed, the very question about the legal enforceability of the award or the treaty might be the wrong question to ask in the first place. After all, bitter experience has taught many groups that legal rights are only meaningful if there is a power willing to enforce them. For instance, the US government signed *and ratified* hundreds of treaties with Native American political entities during its first century, yet many, if not all, of these treaties have been violated with impunity by the United States since. Why would the situation of Armenians be any different?

